



33(355)

15.11.2013

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՀՈՎՍԵՓԱՎԱՆՈՒՄ ՏԵՐԻ ՈՒՆԵՑԱՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

Հովսեփավանն Ասկերանի շրջանի նորակառույց գյուղերից է, որի երախտավոր զավակ Յուրի Ջհանգիրյանը Նորագյուղի, Աստղաշենի հարևանությամբ օրեցօր իր տարածքներն ընդլայնող ադրբեջանական խոջալու գյուղի դեմն առնելու համար ձեռնամուխ եղավ այդ տարածքում հայկական բնակավայր կառուցելուն: Ծառացած բազմաթիվ խոչընդոտներն արգելք չհանդիսացան մտածածը կյանքի կոչելու: Արցախյան շարժմանը հաջորդեց պարտադրված պատերազմ, որի հաղթանակի բերկրանքն զգացին շատերս: Յուրի Ջհանգիրյանը Արցախյան ազատամարտի հազարավոր նահատակների նման ավելի սրբաջրեց հայրենի հողը: Ադրբեջանցի օմնակալները, զգալով նրա «վտանգավորության աստիճանը», բանտարկեցին նրան ու տեղափոխեցին Բաքու, որտեղ էլ անմարդկային դաժան կտտանքների ենթարկելով սպանեցին:

Նոյեմբերի 2-ին Ասկերանի շրջանի Հովսեփավան գյուղում տեղի ունեցավ Յուրի Ջհանգիրյանի անունը կրող նորակառույց դպրոցական շենքի բացման հանդիսավոր արարողությունը: Ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ԱԺ նախագահ Աշոտ Ղուկասյանը, ԿԳ նախարար Սլավա Ասրյանը, բաղաբաշխության նախարար Կարեն Շահրամանյանը, Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանը, Յուրի Ջհանգիրյանի դուստրն ու թոռները, ովքեր ներկայացել էին Ռուսաստանի Դաշնությունից, պետական կառույցների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, հովսեփավանցիներ:

Հովսեփավանում նման դպրոցական շենք ունենալու պահանջը վաղուց էր զգացվում: Նախկինում պարապմունքներն անցկացվում էին ոչ հարմարավետ պայմաններում: Առաջին դպրոցը բաժան աշակերտ ունի: Ասկերան Հովսեփավանը երիտասարդ ու զարգացող գյուղ է, և որ առաջիկայում աշակերտների թիվը կրկնապատկվելու է, կասկած անգամ չկա: Ու մոտ ապագայում դպրոցի հարակից տարածքում նոր շենք կառուցելու անհրաժեշտություն կառաջանա:

Նորակառույց դպրոցական շենքի հանդիսավոր միջոցառումը բացեց համայնքի ղեկավար Խաչիկ Պետրոսյանը:

- Այսօր մեծ տոն է, և մեկ հաղթանակ: Յուրաքանչյուր մարդու համար հոգևոր սննդի ակունքն սկսվում է դպրոցից, և եթե այն հարուստ է լինում ու բեղմնավոր, ապա մուտքը դեպի կյանք դյուրին է դառնում ու պատվավոր: Թող դպրոցում զիլ դողանքի գանգը, և որպես ավետիս՝ լուր տանի մեր սիրելի Յուրի Հովսեփի Ջհանգիրյանին ու նրա ընտանիքին, ինչպես նաև հովսեփավանցի չորս նահատակներին, ովքեր իրենց արյունը շաղախեցին այս հողին՝ փրկելով այն ոսոխի ճիրաններից: Թող Աստված երկար կյանք տա այն ստեղծագործ մտքին և բարեգործ ձեռքին, ով չի երկմտում, քարոք քարոք է դնում՝ կառուցելով մեր ապագան:

Գյուղում առաջին անգամ դպրոցական զանգ հնչեց 1998 թվականի սեպտեմբերի 1-ին՝ բնակելի շենքերից մեկում, որը, սակայն, չէր բավարարում դպրոցի պահանջները:

- Այսօր մենք բացառիկ նվեր ստացանք, ինչը նաև պարտավորեցնող է: Ուստի խոստանում ենք աշխատել ուժերի գերլարումով, մատաղ սերնդի կրթադաստիարակչական աշխատանքը կազմակերպել պատշաճ մակարդակով և լինել մանկավարժին վայել բարձունք:



քում, - սասց Հովսեփավանի հիմնական դպրոցի տնօրեն Անահիտ Գրիգորյանը:

- Անչափ ուրախ ենք նոր ու հարմարավետ կրթօջախում ուսանելու համար և մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունն ենք հայտնում Արցախի իշխանություններին՝ այսքան երկար սպասված նվերի համար: Մուտքդ բարի լինի, սուրբ օջախ, հոսքդ՝ առատ, - նշեց Յու. Ջհանգիրյանի անվան հիմնական դպրոցի աշակերտ Նաիրի Գասպարյանը:

- Հովսեփավանը բազմաթիվ հիմնախնդիրներ ունի, որոնք ժամանակի հետ լուծվեցին շնորհիվ երկրի բանհմաց ղեկավարների: Չլուծված էր մնում հարմարավետ դպրոցական շենք ունենալու հարցը: Այսօր իրականություն դարձավ նաև բոլորիս այդ երազանքը: Այս հույսակերտ դպրոցը մեծ նվեր է համայնքի բնակչությանը իր հարմարվետ դասասենյակներով, խաղահրապարակով, հարակից տարածքով, որը շատ շուտով, համոզված ենք, դպրոցի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվների ջանքերով գեղեցիկ ծառաստանի կվերածվի, - իր ելույթում մասնավորապես սասց համայնքի բնակիչ, Նորագյուղի «Հաղթանակ» կոլտնտեսության նախկին նախագահ Արշակի Գալստյանը, ով մեծապես նպաստել է Հովսեփավան գյուղի կայացմանը:

Ա. Գալստյանը գյուղացիների անունից շնորհակալություն ու երախտագիտություն հայտնեց երկրի իշխանություններին, որոնց ամենօրյա գործունեությամբ շենանում ու բարգավաճում է Արցախը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանն իր ելույթում սասց.

- Անկասկած, օրը տոնական է բոլորիս համար, քանզի դպրոցաշինության բնագավառում և մեկ խնդիր իր լուծումը ստացավ: Օրը խորհրդանշական է այն առումով, որ մենք նորակառույց դպրոց ենք ընդունում Արցախյան շարժման 25-ամյակի հոբելյանական տարում: Նաև այն առումով, որ Հովսեփավան գյուղը հենց Արցախյան շարժման ծնունդ է և կրում է Արցախի նվիրյալ զավակներից մեկի՝ Յուրի Ջհանգիրյանի անունը: Նրա իրականացրած բարի գործը սերնդեսերունդ կփոխանցվի և կիշխի հավետ: Հանրակրթությունը մեր իշխանությունների գերակա խնդիրն է: Այդ է վկայում այն փաստը, որ ներկայումս ընթացքի մեջ են երկու տասնյակի հասնող դպրոցական նոր շենքերի շինարարական աշխատանքները: Հանրապետությունում իրականացվող շինարարության առյուծի բաժինը հասնում է կրթության ոլորտին, ինչի համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանին:

Դիմելով դպրոցականներին, ովքեր ուսանելու են նման հարմարավետության պայմաններում, կրթության և գիտության նախարարը կոչ արեց ավելի լավ սովորել, քանզի մեր երկրի ապագան գիտելիքով, գիտության զարգացմամբ է պայմանավորված: Ս. Ասրյանը համոզմունք հայտնեց, որ տարիներ հետո այս դպրոցի շրջանավարտները մեր երկրի զարգացման ու բարգավաճման գործում իրենց բարի նպաստը կբերեն:

Աստղաշենի ժան Անդրյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, այն տարիներին Աստղաշենի կոլտնտեսության վարչության նախագահ Սլավա Գրիգորյանն իր ելույթում անդրադարձավ պատմական այն օրերին, երբ Յուրի Ջհանգիրյանը խոջալուի դեմն առնելու համար դիմել էր իրեն՝ կոլտնտեսությանը պատկանող մեխանիզացիայի բազայի տեղը նոր գյուղ կառուցելու նպատակով տարածք տրամադրելու խնդրանքով: Նա խանդավառված էր այդ վեհ գաղափարով, քանզի խոջալուի կողքին գյուղ կառուցելը մեծ վտանգ էր իրենից ներկայացնում, ինչը, սակայն, ժամանակի հրամայական էր:

- Այդ տարիներին դժվար թե պատկերացնեինք, որ կգա մի օր, և մենք կհավաքվենք Հովսեփավան գյուղում՝ մասնակցելու նորակառույց դպրոցական շենքի հանդիսավոր բացման արարողությանը: Ու այսօր ես առավել քան ուրախ եմ, քանզի Հովսեփավանը զարգանում է տնտեսապես, իսկ նրա բնակիչների թիվը տարեցտարի ավելանում է: Ես հպարտ եմ դրանով, հպարտ, քանզի հովսեփավանցիները երբեք չեն մոռանում իմ համագյուղացուն՝ Յուրի Ջհանգիրյանին: Նա պատմություն է դարձել իր երկրամբ, գործունեությամբ, հերոսությամբ:

Յուրի Ջհանգիրյանի թոռներն ու դուստր էլա Ջհանգիրյանը հազարավոր կիլոմետրեր են կտրել-անցել, միայն թե ներկա գտնվեն իրենց հարազատի անունը հավերժացնող նորակառույց դպրոցական շենքի հանդիսավոր բացմանը:

- Այսօր ես իմ խորին երախտագիտությունն են հայտնում բոլոր նրանց, ովքեր Հովսեփավանի դպրոցն իմ հոր անունով են կոչել: Ով է եղել իմ հայրը՝ գիտեն ողջ արցախցիները, և նրա մասին շատ ջերմագին խոսքեր ասվեցին: Ու մի պահ ինձ թվաց, թե հայրս կենդանացել է:

Թանկագին աշակերտներ, ցանկանում են ձեզ ուսման մեջ բարձունքներ նվաճել և կյանքում շատ բաների հասնել: Թո՛ղ խաղաղության պայմաններում մեծացած սերունդը երբեք չմոռանա խաղաղություն կերտած ու անմահացած հերոս տղաներին: Հայրս շատ էր սիրում մեր հիմնավոր բերդաքաղաք Շուշին, և նրա կողքով անտարբեր չէր անցնում: Սեզ էլ

միշտ ասում էր, որ Շուշին մերն է: Ցավում եմ, որ նա այդպես էլ չտեսավ ազատագրված Շուշին: Հայրս քաջ գիտակցում էր Արցախյան ազգային-ազատագրական պայքարի անհրաժեշտությունը: Ու երբ վիրավորվեց եղբայրս՝ Կարենը, հայրս կանչեց մորս և սասց. «Ռոզա՛, վաղը կարող է ես զոհվեմ կամ մեր զավակները, սակայն իմացիր, որ այդ բոլորն արվում է հանուն մեր Հայրենիքի ազատության ու անկախության»:

Մենք դպրոցին գրքեր ենք նվեր բերել, գրքեր ենք բերել նաև հորս գրադարանից: Բերել ենք հորս դիպլոմները, որպեսզի մատաղ սերունդը կարողանա կարևորել ուսումն ու գիտելիքը, ինչով պայմանավորված է մեր հայրենիքի հետագա զարգացումը: Մեր ընտանիքի անունից խորին շնորհակալություն ենք հայտնում Արցախի Նախագահ Բակո Սահակյանին, քանզի որ ամեն անգամ այստեղ գալով, սկանառես ենք լինում, թե ինչպիսի մեծ աշխատանքներ ու բարեփոխումներ են այստեղ կատարվում: Շնորհակալություն են հայտնում բոլոր հովսեփավանցիներին, որոնց շնորհիվ կյանքն այստեղ շարունակվում է:

- Անչափ զգացված եմ այսօրվա գեղեցիկ միջոցառման համար ու շատ շնորհակալ եմ բոլոր նախաձեռնողներին ու ծրագիրն իրականացնողներին: Այսօր կրկին համոզվեցի, որ՝ «Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»: Չի մոռացվել իմ պապիկի, իմ հոր՝ Կարենի և հորեղբորս՝ Սամվելի կատարած ազգանվեր, անձնուրաց գործը: Հպարտության վեհ զգացում է պատել հոգիս, քանզի իմ նախապապի անունով կոչված է այս գյուղը, իսկ պապիկիս անունով դպրոց է կոչված: Ջհանգիրյանների նոր սերունդը՝ Յուրան, Վլադը և ես, այսուհետ պարտավորվում ենք ոչ միայն մեր այցելություններով ուրախացնել ձեզ, այլ նաև հարկ եղած դեպքում օգնության ձեռք մեկնել, - սասց Արթուր Ջհանգիրյանը:

Դպրոցի սաները ելույթ ունեցան Յուրի Ջհանգիրյանին և հովսեփավանցի նահատակված քաջամարտիկների վառ հիշատակին ձոնված բանաստեղծություններով ու հայրենասիրական երգերով:

Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Անդրեաս քահանան կատարեց դպրոցական շենքի օծման և օրհնության արարողակարգը:

- Երեկ Վարազաբուն գյուղում հուշարձանի բացում տեղի ունեցավ, իսկ այսօր այստեղ՝ դպրոցական նոր շենքի: Երկուսն էլ դպրոց են, մեկը անխոս, մյուսը՝ խոսուն: Ես կցանկանայի, որ այս շրջան շարունակական լինի, ու այդ շրջայի յուրաքանչյուր օղակ պարտքի և պատասխանատվության վեհ զգացումով կատարի իր պարտականությունը: Շնորհավորելով ներկաներին՝ սասց տեր Անդրեաս քահանան:

Կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց Յուրի Ջհանգիրյանի դուստր էլա Ջհանգիրյանին և թոռ Վլադիկ Ջհանգիրյանին: Ներկաները թարմ ծաղիկներ դրեցին Յու. Ջհանգիրյանի պատվին պատրաստված անկյունում՝ հարգանքի տուրք մատուցելով մեծ հարեճասերի անմար հիշատակին: Այսուհետ հայրենիքի մեծ նվիրյալը դպրոցի մուտքի դիմապատի գ խոսուն հայացքով կղիմավորի յուրաքանչյուր այցելու: Նրա անձնուրաց եւթյամբ ու սիրագործություններով սերունդներ կդաստիարակվեն, ովքեր կշենացեն իրենց պապերից ժառանգած ազատ ու անկախ Արցախը:

Անահիպ ԳԵՏՐՈՍՅԱՆ

ՕՐԱԳԻՐ

ՄԵՆ ԶԱՓԱՐՅԻՆ



ավելի բարեկեցիկ ու արժանավայել կյանքով:

Գյուղի բարեկեցությունը կայունացնելու գործում իր պատկառելի ավանդն ունի ծննդով չափարցի բարերար Վարուժան Գրիգորյանը: Նա ծնվել է Չափար գյուղում՝ համեստ ու ազնիվ հայ աշխատավորի՝ Ռաֆիկ Գրիգորյանի ընտանիքում: Հանկարծահաս մահը խլում է Ռ. Գրիգորյանի կյանքը՝ երեք որդիներին ու միակ աղջկան թողնելով երիտասարդ կնոջ խնամքին: Հենց այդ պահից Վարուժանի մոտ երևան եկան բնավորության այն գծերը, որոնք հետագայում առավել ցայտուն դրսևորվեցին. մոր, քրոջ և եղբայրների մասին մտածելը և հոգալը նրա համար կենսակերպ դարձավ: Անսպառ էներգիան, որ հորդում էր նրանից, ծառայում էր դժբախտությունն տեսած ընտանիքին սատարելուն: Վ. Գրիգորյանը Արցախի գոյամարտի ակտիվիստներից է, այդ պայքարում նա կորցրեց շատ սիրելի մորը՝ Մարուսյա Գրիգորյանին, ում բուրդը սիրում և հարգում էին:

Նա ճաշակեց բռնագողթի դառն պտուղները, տռտապեց հարազատ գյուղի կարոտով, բայց երբեք չընկճվեց, հուսախաբ չարեց ոչ ընկերներին ու ոչ էլ հարազատներին:

Համարձակություն, անսահման աշխատասիրություն, անսպառ էներգիա, բնածին կազմակերպչական կարողություն, սկզբունքայնություն, նպատակասլացություն՝ ահա այն որակները, որ բնորոշ են նրա տեսլանքին: Հենց այդ մարդկային որակների շնորհիվ նա հաղթահարեց բազում խոչընդոտներ ու արգելքներ: Համառ աշխատասիրությամբ և կազմակերպչական հզոր ջիղով նա քայլ առ քայլ վեր բարձրացավ ու դարձավ Հայաստանի գործարար աշխարհի կայացած դեմքերից մեկը: Մշտական զբաղվածությունը, գերմարդկային

լարված աշխատանքը երբեք արգելք չէր դառնում այն մեծ ու անսահման սիրուն, որ նա տածում է ոչ միայն հայրենի գյուղի, այլև հարազատ լեռնաշխարհի հանդեպ: Հարուստ ու բազմապիսին է Վարուժան Գրիգորյանի կյանքի ողիսականը: Արցախյան գոյամարտի թե՛ տարիներին ԼՂՀ ՊՊԿ հանձնարարությամբ կատարել է զգալի աշխատանքներ, իսկ հրադադարի հաստատումից հետո մի քանի տարի աշխատել է ԼՂՀ ՊԲ մատակարարման բաժնում:

1997թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, գրեթե մեկ տարի եղել է ԼՂՀ հարկային պետվարչության օպերատիվ ծառայության ներկայացուցիչը Հայաստանում, 1998թ. Երևանում հիմնադրել է «Փեթակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Նրա բարեգործական ծրագրերն առավել լայն թափ առան ու ձեռք բերեցին համամարդկային բնույթ, դարձան հունանիզմի և հայրենակառույց գործի դրսևորման վառ ապացույցներ: Վարուժան Գրիգորյանը բազմիցս ապացուցեց, որ ինչքան էլ հաջողակ բախտի սանդղակով վեր բարձրանա, երբեք չի մոռանա այն գյուղը և լեռնաշխարհը, որտեղ ծնվել, մեծացել ու հասակ է առել, ամառաբեր չի լինի համա-գյուղացիների հոգսերին: Կան իրական դրվագներ, որոնք ավելի պերճախոս են, բազմիմաստ, քան հարյուր-հարյուր գեղեցիկ խոսքերը: Մտքը այս հոյակերտ կառույցը՝ Չափարի մանկապարտեզի շենքը և վկա կլինեք այն անսահման մեծ սիրուն ու հոգատարությամբ, որ նա տածում է մանուկների հանդեպ: Հարցրեք չափարցի դպրոցականներին և ուսուցիչներին՝ ո՞վ է Վարուժան Գրիգորյանը, նրանք ձեզ կպատասխանեն. «Մարդ, որ ամեն տարի Ամանորի նվերներով

ու գրեմական պիտույքներով ապահովում է դպրոցը, իսկ երբ տարիներ առաջ դպրոցն աթոռ, սեղան չունեի, ամերաժեշտ կահույքով ծանրաբեռնված բեռնատարը նա ուղարկեց դպրոցի բակ»:

Չոհված ազատամարտիկների ընտանիքներին, միայնակ ծերերին, բազմանդամ ու սակավակարող ընտանիքներին ցուցաբերվող նյութական օժանդակությունն ամենամյա, հաճախ էլ ամենամյա բնույթ է կրում: Տարիներ առաջ, երբ չափարցիները նոր էին ոտքի կանգնում բռնագողթն արասափներից, ու գյուղում գրեթե ոչինչ չէր մնացել, Վարուժան Գրիգորյանը, որ դեռ նոր էր սկսել գործարարի դժվար ու պատվաբեր գործը, սրտացավորեց արձագանքեց գյուղացիների հոգսերին: Ամեն տարի բարեկարգվում էին ու հիմա էլ բարեկարգվում են Գետավան-Չափար մայրուղին, գյուղի կենտրոնական և միջթաղային փողոցները: Մեծ հայրենասերի ֆինանսավորմամբ ու ակտիվ միջամտությամբ կառուցվել են գոհված ազատամարտիկ Ա. Սաղյանի (ուն անունը կրում է դպրոցը) պապենական տունը, գյուղի հանդիսությունների սրահը: Նրա օգնությամբ գյուղ են հասցվել ջրատար խողովակներ, և գյուղի բնակչությունն ապահովվել է խմելու ջրով:

Այս տարի գյուղից դեպի հյուսիսարևմուտք ձգված ճանճանոց կոչվող տարածքում կատարվել են բարեկարգման ու շինարարական զգալի աշխատանքներ, այնտեղ է հասցվել «Դուրևակի բուլակ» աղբյուրի ջուրը, ու կառուցվել հուշաղբյուր, որը կրում է մեծ չափարցու՝ Վ. Գրիգորյանի անունը:

2013թ. ապրիլից սկսվել է Չափարի Ա. Սաղյանի անվան միջնակարգ դպրոցի հին շենքի բանդման ու նոր դպրոցի կառուցման գործը: Դպրոցի

շենքի կառուցման ֆինանսավորումը կատարվում է Վ. Գրիգորյանի միջոցներով:

2013թ. գարնան-ամռան ամիսներին եվրոպական չափանիշներով հիմնանորոգման են ենթարկվել մշակույթի տունը, մանկապարտեզի շենքը, հանդիսությունների սրահը՝ իր բոլոր հարմարություններով: Գյուղապետարանի և բուժկետի շենքը կառուցվում է հիմքից: Գյուղամիջում հիմքից է կառուցվում Արցախյան գոյամարտում և 1941-1945թթ. Հայրենական պատերազմում զոհված հայորդիների հուշարձան-համալիրը:

Գյուղի բնակչությանն ամբողջությամբ բարեբախտ դառնալու նպատակով անհրաժեշտ պարենամթերք և ֆինանսական միջոցներ:

Անչափելի են Վ. Գրիգորյանի մարդասիրական ձգտումները, իսկ նրա բարեգործությունը սահմաններ չի ճանաչում, չի եզրափակվում հայրենի գյուղով, այլ տարածվում է շրջանի և հանրապետության սահմաններից դուրս: Աճում ու առավել լայն թափ են ստանում նրա բարեգործական առաքելությունները, որոնք հունանիզմի, հայրենասիրության, մարդկային արժեքների ամենավառ ու ցայտուն դրսևորումներ են: Չափարի ողջ հասարակության կողմից մեր անսահման երասխապետությունն ու անկեղծ շնորհակալությունն ենք հայտնում գյուղի արժանավոր որդի Վարուժան Գրիգորյանին՝ ցանկանալով նրան երկաթյա առողջություն, ընտանեկան անդորր ու երջանկություն, անսպառ եռանդ, կապույտ ու խաղաղ երկինք, նորանոր ձեռքբերումներ: Թող ժպիտը անպակաս լինի Ձեր և Ձեր գերդաստանի անդամների դեմքից:

**Իրինա ՍԵՎՈՒՄՅԱՆ**  
**Չափարի միջև. դպրոցի փորձն**

ԵՎՍ ՄԻ ՀԱՃԵԼԻ ԱՅՅՆԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻՅ

Վերջին տարիներին բարի ավանդույթ է դարձել ՀՀ Շիրակի մարզի և Ասկերանի շրջանի միջև համագործակցությունը, որի շրջանակներում վերջերս կայացավ հերթական այցելությունը: Այս անգամ ժամանել էր Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ռեկտոր Վարդևան Գրիգորյանի գլխավորությամբ: Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Սերգեյ Գրիգորյանը պատշաճ մակարդակով ընդունեց հյուրերին: Նախ, ժողովներ դրեցին Արցախյան պատերազմում նահատակված ասկերանցիների հիշատակին կանգնեցված հուշարձանին, ապա առանձնա-գրույց ունեցան շրջվարչակազմի ղեկավարի առանձնասենյակում: Սերգեյ Գրիգորյանը բարձր գնահատեց Ասկերանի շրջանի և Շիրակի մարզի միջև ստեղծված ամուր կապն ու փոխգործակցությունը՝ նշելով, որ այն իր դրական և խթանիչ ազդեցությունը կունենա շրջանի կրթամշակութային, սոցիալ-տնտեսական, գյուղատնտեսության և այլ բնագավառների զարգացման վրա, ինչպես նաև հայկական հայտնեց, որ առաջիկա հանդիպումը կլինի Շիրակի մարզում: Խոսքը շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Շահեն Արաբաբյանի ուղեկցությամբ այցելեց Խնամապատի, Իվանյանի, Խաչենի միջնակարգ դպրոցները:

Կրթության բաժնի վարիչն անդրադառնալով Շիրակի մարզի հետ հաճելի համագործակցությանը՝ ասաց.

- Վերջին տարիներին ավանդույթ դարձած այս հանդիպումներն անչափ ողջունելի են և կարևոր երկու կողմերի համար: Շիրակի մարզից մեր շրջան են այցելել տարբեր պատվիրակություններ: Կրթության համակարգում այս համագործակցությունն ավելի խորն է: Շուրջ չորս տարի է, ինչ չփվում ենք Գյումրու մանկավարժական ինստիտուտի դասախոսական կազմի հետ, և կարևորում են գիտելիքների ու փորձի փոխանակումը: Նման այցելությունները յուրօրինակ խթան են հաջողությունների ձեռքբերման գործում:

Ռեկտոր Վարդևան Գրիգորյանը նույնպես շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության և իրենց ծրագրերին ընդառաջելու համար.

- Անշուշտ, ամեն անգամ Արցախ այցելելիս նորանոր տպավորություններ ենք ստանում: Այսպիսի ջերմ

և անկաշկանդ մթնոլորտում հաճելի է գրույց ունենալ, կիսվել մտախոհիչ խնդիրների շուրջ: Ուրախություն ենք զգում, երբ Արցախն ավելի շենացած և բարգավաճ ենք տեսնում: Պատերազմ տեսած և արհավիրքներով անցած ժողովուրդը կարողանում է պահպանել կամքի ուժն ու հաստատականությունը, որի առիթավորությունն այսօրվա Արցախն է՝ իր համայնքներով և կրթական ու մշակութային օջախներով: Գյումրեցիներն ունենալու դժվարություններով անցած ժողովուրդ ենք: 88-ի երկրաշարժից դեռևս լրիվությամբ չապաքինված՝ ցանկանում ենք պահպանել քաղաքի երբեմնի փառքը: Այսօր մեր ինստիտուտն ունի 5000 ուսանող, որոնք սովորում են 30 մասնագիտությամբ: 80 տարվա կենսագրություն ունեցող ինստիտուտը հպարտանալու շատ պատճառներ ունի: Մենք թողարկել ենք բազմաթիվ նշանավոր շրջանավարտներ, որոնք բարձր են պահել հարազատ ինստիտուտի պատիվը: Մենք՝ մանկավարժներս կատարում ենք աստվածահաճո աշխատանք. կրթում ու դաստիարակում ենք մատաղ և երիտասարդ սերնդին: Այս հրաշք երկիրը, որը տեսել է անողորմ պատերազմ, դաժան օրեր, պարտավոր է արժանի սերունդ ունենալ, որն էլ լինելու է բոլորիս ապագան:

Խնամապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Ջավեն Բեգլարյանը նույնպես իր ելույթում կարևորեց կրթական համակարգում փորձի փոխանակումը:

Անկեղծ և անկաշկանդ մթնոլորտում անցան հանդիպումները նաև Իվանյանի և Խաչենի դպրոցներում: Եղավ փորձի փոխանակում, քննարկվեցին մասնագիտական հարցեր:

Հյուրերը Ասկերանի շրջանային կրթության բաժնի վարիչի և մասնագետների ուղեկցությամբ եղան նաև պատմական Գանձասարում: Ոմանք առաջին անգամն էին Արցախում: Անհնար է նկարագրել այն ոգևորությունն ու հիացումները, որ զգում էին նրանք:

Պատվիրակության մասնակիցներն Ասկերանի շրջանի ղեկավարության ջերմ ընդունելությունից ու կազմակերպած հանդիպումներից մեծ բավականություն ստացած՝ մեկնեցին Գյումրի՝ ակնկալելով ասկերանցիների պատասխան այցը մոտ ապագայում:

**Կարինե ԲԱՆՇԵՅԱՆ**

ՆՎԻՐԱԾ ՀԱԶԱՐԱՄՅԱ ՄԵՐ ԷՊՈՍԻ

Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է ժողովրդական մի հերոսապատում՝ էպոս, որը, մեծ հայագետ Մանուկ Աբեղյանի դիպուկ բնորոշմամբ, տվյալ ժողովրդի ապրած կյանքի «բանաստեղծական պատմությունն է»: Ստեղծվելով 9-10-րդ դարերում՝ ավելի քան հազար տարի ասվել, պատմվել, բերնեբերան տարածվել և մեզ է հասել թրծված, մաքրագործված մի ստեղծագործություն, որը կրում է «Սասնա ծռեր», «Սասունցի Դավիթ», «Ջրջանցի տուն», «Մեծերի տուն», «Հսկաների տուն» անվանումները:

Յուրեղանքի 31-ին, Մարտունու մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի և գրադարանի աշխատողների նախաձեռնությամբ Մարտունու քաղաքում կազմակերպվեց գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված հազարամյա պատմություն ունեցող մեր էպոսին:

Բացելով միջոցառումը՝ Մարտունու շրջվարչակազմի մշակույթի և երիտասարդության բաժնի վարիչ Ա. Խաչատրյանն ասաց, որ 1939թ. մեծ շուքով նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը: Ողջունելի համարեց 2012թ. դեկտեմբերի 5-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանի որոշմամբ ավելի քան հազարամյա պատմություն ունեցող «Սասունցի Դավիթ» էպոսի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում ընդունվելու փաստը, ինչին նվիրված էր օրվա միջոցառումը: Թուրքիան դեմ էր և հանդես էր եկել հայտարարությամբ, ըստ որի՝ անհրաժեշտ է հայտնի հանել «Սասուն» անվանումը, քանզի դա Թուրքիայի տարածքային ամբողջականության դեմ ոտնձգություն է, իսկ Արդեթանն էլ պաշտ-

պանում էր այդ տեսակետը: Ասել է թե՛ մեկ անգամ և միջազգայնորեն ամրագրվեց Սասունը հայերի պատմական հայրենիքը լինելու փաստը:

Էպոսի անվան ստուգաբանության, սյուժեի, գլխավոր հերոսների մասին մանրակրկիտ ու ամբողջականորեն ներկայացրեց Մարտունու կենտրոնական գրադարանի սպասարկման բաժնի պետ Էլլա Օհանյանը:

Ուշագրավ էր Մարտունու հ. 1 հոսքային միջնակարգ դպրոցի 5-րդ «բ» դասարանի աշակերտներ Գոռ Ավագյանի և Հարություն Սահակյանի բեմականացմամբ Սարա Մելիքի և Սասունցի Դավիթ մարտը, որում խտացված էր հայրենադարձության գաղափարը:

Ա. Խաչատրյանը, որ մինչ այդ չէր հավատում Մեծերի դառն գոյությանը, վերջինիս գոյության մասին հուզմունքով խոսեց, որը, նրա վկայությամբ, երկինք հասնող մի հսկա բլուր է: Արևմտյան Հայաստան կատարած ուխտագնացության ժամանակ ընդամենը երեք հոգու, որոնցից մեկն Ա. Խաչատրյանն էր, հաջողվեց կտրել-անցնել և հասնել Մեծերի դուռ: Ասվածի ապացույցը եղավ Արևմտյան Հայաստան կատարած ուխտագնացության տեսահոլովակի ցուցադրումը:

Փակելով գրական-գեղարվեստական ցերեկույթը՝ Ա. Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց մասնակից-կազմակերպիչներին և ներկաներին՝ նշելով, որ գեղեցիկ մի օր մեր երկրում կտրի Մեծերի երազած արդարությունը. այդ արդարությունը բոլորի համար, թերևս, երազանք է դարձել:

**Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ**  
**ք. Մարտունու**

ՄԱՏՅԱՆ

ԱՐՓԱԳԵՏՈՒԿԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Նվիրում են Մանվել Հակոբյանի պայծառ հիշատակին

Լինե՛ր, այնպե՛ս լինե՛ր, որ Ուսուցիչը նստեր արևի բեկորից չվնասված գրասեղանի առաջ, բացեր մատյանն ու երկար ներկա-բացակա աներ իր արվագետուկցի աշակերտներին, ու բացակա չլինե՛ր:

Լեռնային մի փոքրիկ գյուղ է Քարինգ-Արվագետուկը՝ Դիզակախ լեռան լանջերին՝ Խժաբերդի ճանապարհին: Գյուղի դարպասի մոտ մի խորհրդավոր խաչքար կա, խաչքարից մի փոքր հեռու՝ մի սրբատեղի աղբյուր, որ ասես բխել է Քուռկիկ Ջալալու ոտքի զարկից, մի գողտրիկ սեղանատուն-քողտիկ, որ ամեն անցորդի հաց ու ջուր է տալիս՝ Սասնա հարիսա եփող կանանց պես: Ապա ևս մի քանի ոտնաչափ և նեղլիկ ծորակը ծունկը ծալելով գրկում է դիմացի տանից դուրս թռչող մանկանը:

«Սա ո՞ր գյուղն է, տղաս», - հարցնում է ուղեկիցս փոքրիկ տղային: «Մե՛ր գյուղը», - լսվում է պարզ ու անմիջական, բայց խորիմաստ պատասխանը:

Դա գյուղի միակ Ուսուցիչի աշակերտներից մեկն է, ով լավ է սերտել ամենակարևոր դասը. «Սա մե՛ր գյուղն է, մե՛ր հողն ու ջուրը»:

Ուսուցիչը երեք աշակերտ ունի, երեք զինվոր որդի, երեք դարավոր ընկուզենի, յոթ կով, անգամ մի ավանակ, ով խոնարհաբար ամեն տարի շալակած բերում էր յոթ կովերի բաժին

խոտը՝ հուսալով, որ դրջինը ինքն է ուտելու, հավեր, որոնց հաշիվը ոչ ոք չգիտի. ամեն հյուրի ոտքերի տակ մորթվող հավը հաշիվ չի ունենում...

Ուսուցիչը ունի մի համեստ հենարան, ով խոնարհաբար ու պարզաբերտ հյուրասիրում է օջախի՝ գյուղի դուռը բացողին, ում պատրաստած բոխի թթուն ու վայրի ճագարի մսով սպորտը՝ մաշը, սովորում են արցախյան թթի օրու համբավն ու համուհոտը:

Ըմբոստ ու արդարամիտ, շիտակ ու ճշմարտախոս, հյուրասեր ու աշխատասեր, պարզ ու անմիջական, մաքառող ու կռվող, կյանքի փորձով իմաստնացած Ուսուցիչը նաև հողագործ շինական էր՝ գյուղի տերն ու ապավենը: Նա այս գյուղի բառ ու բանի, հող ու ջրի, ծառ ու ծաղկի, մարտնու և դաղձի, ձկան ու եղնիկի անդամաճան ընկերն է և ինքնիշխան տերը՝ որպես խամսայի մի մեկը: Նա նաև և առաջին հերթին զինված զինվորն է ու պաշտպանն այս հողի:

«Քանի՞ աշակերտ կա գյուղում», - հարցրի Ուսուցիչն ու անմիջապես զգացի, որ լավ հարց չեն տվել. հասկացա, որ նա մտքում վազում է հնօրյա հուշի մի ծվենի ետևից:

Գարնան արևի դուրեկան ջերմություն էր զգում երիտասարդ Ուսուցիչը, երբ բազմաթիվ

աշակերտները դասամիջոցին խաղում էին դպրոցի բակում, ու նրանց զիլ, զրնգուն ձայնը խառնվում էր Սիպտակ ջրի ձորից լավոր աղմուկոտ շառաչին: Այդ աղմուկը ներդաշնակ երաժշտականություն էր ստանում թրիքով ծեփված փեթակից դուրս թափված մեղվապարսի հարսանեկան երգից: Աղվերտում բառաշունչ էին նորածին հորթերը՝ տրտիճա տալով ցատկոտում այս ու այն կողմ, և Ուսուցիչը թաթուն հրճվանքով դիտում էր մերթ խաղացող աշակերտներին, մերթ ցատկոտող հորթերին, մերթ օդում բզզացող մեղվապարսին, որ ուղեկցում էր հարսանեկան պարի ելած մեղվամորը: Այդ պահին աշխարհը նրան դրախտ էր թվում, անհոգ խաղացող աշակերտները՝ երկնային հրեշտակներ:

Աշակերտները մեղվապարսի պես պտտվում էին Ուսուցչի շուրջը, ու նրանց աղմուկոտ ձայնը տարածվում էր ձորով մեկ՝ մեղվապարսի բզզոցի պես:

«Հիմա... հիմա երեք աշակերտ», - սխալվածի պես ասաց արդեն սպիտակահեր Ուսուցիչը: Ապա կարծես շարունակելով իր մտքի ընթացքը, բարձրածայն մտածեց. «Ա՛յ էնտեղ՝ գյուղի մյուս ծայրին, իմ աչքի առաջ խփեցին առաջին աշակերտիս, ով արդեն թռնատեր մարդ էր: Հիմա իմ երեք աշակերտներից մեկը

հենց նրա թռն է, ով պապի անունն ունի՝ Գրիգոր: Ամեն անգամ ներկա-բացակա անելիս հիշում են առաջին աշակերտիս՝ զոհված մեր կյանքի համար»:

Սեղավոր զգացի հարցիս համար, բայց հասկացա, որ հուշը հին ու հույսը նորի մեկտեղվել են արցախի լավատես Ուսուցչի ցաված հոգում:

Լեռնային մի փոքրիկ գյուղ է Քարինգ-Արվագետուկը՝ Դիզակախ լեռան լանջերին՝ Խժաբերդի ճանապարհին, որի եզրին անուսնուն կորցրած լքված հարսի պես այժմ էլ սպասում է մի վիրավոր գրահամբեբնա:

Լինե՛ր, այնպե՛ս լինե՛ր, որ Ուսուցիչը նստեր արևի բեկորից չվնասված Ամարասի՝ Արցախի առաջին դպրատան գրասեղանի առաջ, Գրիգորիս եպիսկոպոսի մարմարիոնե գերեզմանից լույս ցայտեր, ինքը բացեր մատյանն ու երկար ներկա-բացակա աներ իր բուրդ աշակերտներին, ու ոչ ոք բացակա չլինե՛ր, անգամ Լուսավորչի թոռ Գրիգորիսը:

Վանո ԵՂԱՋԱՐՅԱՆ  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԴՊՐՈՅԸ ԿՐՈՒՄ Ե ՆՐԱ ԱՆՈՒՆԸ

Արցախյան գոյամարտի տարիներին Դրախտիկ գյուղը ինը զոհ է տվել. Գևորգյան Արկաղյա, Առուշանյան Տոլյա, Դավթիսյան Յուրիկ, Տոնյան Երջանիկ, Գևորգյան Շահին, Գևորգյան Յուրա, Սկրտումյան Լյուվա, Տոնյան Ռոբերտ, Բաղդասարյան Վազգեն: Ինը զոհ՝ փոքր մի գյուղից: Այդ ինը հոգուց երկուսը (Տոնյան Ռոբերտ, Բաղդասարյան Վազգեն) հետնամահու արժանացել են «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի: Այսօր ուզում են խոսք ասել նրանցից մեկի՝ Վազգեն Բաղդասարյանի մասին:

Ծնվել է 1951-ին, Դրախտիկում, ուր այն տարիներին սովորում էին մինչև իններորդ դասարանը: Ութերորդն ավարտել ու գնացել է Բաքու՝ հորաքրոջ մոտ: Այստեղ շարունակել է ուսուցը, միջնակարգի վկայական ստացել ու նույն տարում էլ բավականին բարձր միջնորդ ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը: Դա 1970-ին էր: 1975-ին դիպլոմ է ստացել ու տուն դարձել: Առաջին տարին աշխատել է Մարիամաձորում, հայրենի գյուղում տեղ չի եղել: Հաջորդ տարում, երբ տեղ է բացվել, եկել ու անդամագրվել է իրեն այնքան հարազատ դպրոցի ոչ մեծ կուլեկտիվին: Ու շուրջ տասնհինգ տարի մատյան է վերցրել, դասարան մտել, երեխաների «աչքերը բացել», մտածել սովորեցրել, թվերի, հավասարումների աշխարհը տարել:

Հենց առաջին ամիսներին ուսման ծարավ երեխաներն զգացել են, որ նոր ուսուցիչը զուրկ մոր ձևով է վարում, բոլորին ուշադրության կենտրոնում է պահում, պատեհ առիթներով ոգևորում, խրախուսում: Ձգացել ու սիրել են նրան: Տարիներ են անցել, տակավին երիտասարդ մասնագետը աշխատանքում ավելի է հմտացել, բարի համբավ ձեռք բերել, փոխտնօրեն նշանակվել, ու նրա կշիռը, հեղինակությունը բոլորի աչքում ավելի է բարձրացել:

Մեր ընկեր Բաղդասարյանը... այս բառերը մի առանձին սիրով ու ակնածանքով են արտասանել և փոքրերը և՛ մեծերը՝ ծնողները: Այսպես՝ տարիներ շարունակ, այսպես՝ մինչև 1988-ը: 88-ին, երբ փոթորկվել է Ղարաբաղյան շարժումը, նա դարձել է ամբողջ գյուղի ուսուցիչը: Հասկանալի է, հիմա արդեն ուրիշ բան է բացատրել: Բացատրել է օրեցօր թափ առնող Շարժման դրոշմատուները, նպատակները, հասկացրել, ցույց տվել հային հայ պահելու, մեր լեզուն, մեր

հավատը փրկելու՝ հեռվից եկող ու հեռուն տանող ճանապարհները: Սկզբում շատերը վարանել են, երկմտել, հետո կամա՛ց-կամաց կանգնել են ճիշտ ճանապարհի վրա: Շարժման ակտիվիստներից մեկը՝ դպրոցի այժմյան տնօրեն Սլավիկ Ստեփանյանը, որ նրա մարտական ընկերն է եղել, այսպես է պատմում.

- Վազգենը մեծ սիրտ ուներ, կամքի մեծ ուժ ու, որ կարևոր է, ժողովրդին իր ետևից տանելու շնորհք ու ունակություն: Առաջին հեռագիրը մեր գյուղի մարդիկ նրա խորհրդով ու հորդորանքով են իղել Մոսկվա, նա է հերթապահության կետերը որոշել, օրերը սահմանել, նա է երևանից ուղղաթիռով զենքի առաջին խմբաբանակը տեղ հասցրել, նրա ջանքերով է ինքնապաշտպանական ջոկատը կազմավորվել... Մեծ է նրա ավանդը Տոդի, Սլավայթի և Գառնիկի մեծ գործում: Ի դեպ, 91-ի արկիվին մենք արդեն լավ կազմավորված ինքնապաշտպանական ջոկատ ունեինք՝ 13 քաջասիրտ տղաներով. Առուշանյան Վաչիկ, Տոնյան Յուրա, Դավթիսյան Սուրիկ, ուրիշներ... Երկու ամսից հետո, հունիսին այս տասներեքը դարձել է հիսուսյոթ: Ասել է թե՛ գե՛նք են վերցրել բոլոր նրանք, ովքեր ունակ էին, ովքեր պարտավոր էին: Մարդիկ համոզվել էին, որ իրենք պիտի կռեն իրենց բախտը: Ու, պատկերացնում ենք, նույնիսկ վաթսուներ, յոթանասուն անց թոշակառուները (Ուլյան Արսեն, Տոնյան Մեսրոպ, Գևորգյան Գաչալ, Տոնյան Թադևոս, ուրիշներ) կամավոր գնում էին հերթապահության, չէին ուզում ջախճվելուց ետ մնալ:

Այս բոլորին ուղղություն տվողը, շունչ ու եռանդ տվողը Վազգենն էր: Հիշում են, թե ինչպես էր նա Պողոսյան Վիտայիկի, Աբրահամյան Երիկի, Հաղորդից եկած շատ ու շատ ակտիվիստների հետ խորհում, մտորում, տաք-տաք վիճում կռվող տղաներին համախմբելու, նախատեսված ռազմական օպերացիան ճիշտ ժամանակին սկսելու ու հաջող ավարտելու մասին:

Հիշում են նրա անսահման ուրախությունը, ոգևորությունը 91-ի նոյեմբերի 8-ին, երբ վերջապես թուրքերը թողել ու գլուխներն առած՝ փախել էին իրենց հոտած բնից՝ Սլավայթից: Պարզ է, մեր ուժից, մեր գեներացի սարսափած:

Հիշում են ամեն-ամեն ինչ... Մի պահ լռում է, խորասուզվում մտքերի մեջ: - Իմ Վազգենը իմ աչքի լույսն է եղել, իմ միևնույնը,- լեզու է առնում

մայրը, որ մինչ այդ ինքն իրեն ինչ-որ բան էր մտնում:- Ու թեկուզ շատ տարիներ են անցել, բայց էլի չեն ուզում հավատալ, որ նա զոհվել է: Ուրիշ տղա էր իմ Վազգենը՝ բարի, ընկերասեր, խելոք, ամեն ինչով գեղեցիկ: Ու հիմա էլ իմ ակնաջերմում հնչում են նրա բառերը. «Վաղվանից թողնում են դպրոցը... Ափսոսում են, բայց... Բայց իմ տեղը կռվի դաշտն է...»: Ու գնաց:

Գնաց ու կռվեց ամեն տեղ: Կռվեց Սալաթյաթինի, Ղաջարի, Շահարլուի, Ֆիզուլիի համար, կռվեց Խուրիասի, Մելիքջանլուի համար, ոտք դրեց Ջաբրայիլում, Ջանգեզուրում, Կարախանբեյլիում...

Ցավոք, վերջինը ճակատագրական եղավ նրա կյանքում: 94-ի փետրվարի 24-ին այստեղ, Կարախանբեյլիի մոտ նա, որ վաշտի հրամանատար էր արդեն, ԲՄՊ-ի արկից ծանր վիրավորվեց ու երկու շաբաթ անց՝ մարտի 10-ին, Երևանի զինվորական հոսպիտալում ավանդեց հոգին:

Այսպիսին է եղել խիզախ հայորդու անցած մարտական ուղին: Ի դեպ, Վազգենը և կինը՝ Աղեյան (ախտա, հիմա չկա) հինգ զավակ են ունեցել, հինգ զավակ են կրթել ու դաստիարակել: Հովհաննես, Դավիթ, Արտաշես, Լիրա, Անժելա: Բոլորն էլ կյանքում գտել են իրենց տեղը, դարձել մայր հայրենիքի արժանի քաղաքացիներ: Եվ որ ուրախալի է, հիշում, ըստ արժանիքի զենահատում ու միշտ վառ են պահում իրենց հոր՝ մանկավարժ Վազգենի ու հայրենի հողի համար հերոսաբար զոհված բոլոր տղաների հուշն ու հիշատակը:

Դպրոցի բակում, հենց մուտքի մոտ վեր է խոյանում մի գեղեցիկ հուշարձան-կոթող, որի վրա փորագրված են ինը քաջերի դիմանկարները: Կենտրոնում Վազգենն է, «Մարտական խաչի» ասպետ Վազգեն Բաղդասարյանը:

Գյուղի միջնակարգ դպրոցը (շուրջ յոթանասուն աշակերտ ունի ու տասնվեց ուսուցիչ) կրում է նրա անունը ու կռվում է այսպես. Վազգեն Բաղդասարյանի անվան Դրախտիկի միջնակարգ դպրոց:

Ասել է թե՛ նա նորից հարազատ կրթօջախում է, ծննդավայրում, դրախտավայր դարձած Դրախտիկում: Իր համագյուղացիների, իր նախկին սաների, իմ, թո՛ւ, նրա՛, բոլորի՝ հոգիներում ու սրտերում:

Միջալե ԲԱՆՏԱՆ  
Թոշակառու ուսուցիչ

ԿԵՐԵՆԸ՝ ԿԱՅԱՄԱՆ ՇԵՄԻՆ

Քաղաքադի շրջանի Կովսական համայնքի Կերեն գյուղը 2013թ. հունիսի 27-ից ԼՂՀ կառավարության որոշմամբ ստացել է առանձին համայնքի կարգավիճակ. գտնվում է Կովսական-Կապան ճանապարհի վրա՝ Ողջի գետի աջ ափին: Համայնքի կազմում են նաև Սպիտակաշեն և Գրիան գյուղերը: Գանապարհը վերջերս է բարեկարգվել. կա սաֆալտապատման ծրագիր: 2012 թվականին վերջնականապես ավարտվեց դպրոցի շենքի կառուցումը, և գյուղում սկսեց գործել միջնակարգ դպրոցը, որն այժմ ունի 15 աշխատող, որից ուսուցիչները՝ 8 և 14 աշակերտ: Այս տարի առաջին դասարան հաճախում է 2

կաններ, սակայն մեքենայի բացակայության պատճառով հաճախում են Կապանի դպրոցները: Կա գույքի և դասագրքերի պակաս: Ե՛րշտ է, շենքը նոր է կառուցվել, սակայն դասարանները չեն հերթում. չկա ԵՁՊ կաթինետ: Այս ամենով հանդերձ, դպրոցը գործում է, և բոլոր աշակերտները ձգտում են լավ սովորել: Հետ չեն մնում նաև արտադպրոցական ծրագրերից: Միջանցքի պատերին ստեղծագործող աշակերտների գործերն են փակցված: Առավելապես հետաքրքրեցին 10-րդ դասարանի աշակերտուհի Ալիսա Ամիրխանյանի ստեղծագործությունները՝ զուգանկարներ ջրաներկով և գծանկարներ: Ուսուցչուհի Աշխեն Ա մ ի ի ս ա մ յ ա մ ի դուստրը՝ Ալիսան, 3 տարի հաճախել է Դիլիջանի Հովի. Շարանբեյանի անվան գեղարվեստի պետական թուխը: Այժմ էլ՝ որպես ազատ ունկնդիր, հաճախում է Կապանի գեղարվեստի պետական թուխը: Սիրում է նկարել, սակայն



աշակերտ, ավարտական դասարաններում աշակերտներ չկան: Վերջերս այցելեցի Կերեն, որտեղ կան հնադարյան դամբարաններ և արդեն 10 տարի է, ինչ պեղվում են հնագետ Արտակ Գևուրու կողմից: Զրուցեցի դպրոցի տնօրեն Վալերի Թումայանի հետ, եղա դպրոցում: Նա տեղեկացրեց, որ կրթօջախը հիմնականում ապահովված է ուսուցիչներով, միայն կա պատմության ուսուցչի պահանջ: Սանկավարժներից Աշխեն Ամիրխանյանը ընտանիքով եկել է Դիլիջանից, ունի 3 դպրոցահասակ երեխա: Ամուսիններ Ա. Ավագյանն ու Ն. Մարտիրոսյանը նույնպես դասավանդում են դպրոցում, ունեն 3 երեխա, երկուսը՝ դպրոցականներ: Դուրսես Դազարյանը Կերենի բնակիչ է, ժամանակավոր դասավանդում է հայոց լեզու և գրականություն: Տնօրենը գյուղի հիմնադիրներից է. այստեղ են բնակվում 2 որդիներն իրենց ընտանիքներով: Աշակերտների մի մասը գալիս է հարևան Գրիան գյուղից: Համայնքի Սպիտակաշեն գյուղում կան 4-5 դպրոցա-

հոռչել է իրավաբան դառնալ: Տնօրենն ու ուսուցիչներն ասացին, որ բոլոր առարկաները լավ է սովորում, օգնում է կրտսերներին: Իմ հարցին, թե ինչու է որոշել իրավագետ դառնալ, ասաց՝ շատ է սիրում կարգուկանոն: Ավելացրեց նաև, որ դժվարությամբ է նկարելու համար նյութեր ձեռք բերում, հատկապես՝ բատիկայի համար: Չմայած պայմաններ չկան, բայց սիրում է Կերեն գյուղը:

- Ազգանվեր գործ են համարում, որ բնակվում ենք ազատագրված մեր հայրենիքում և շենացնում ենք,- ասաց Ալիսան՝ ավելացնելով, որ հավատում է՝ կունենան էլեկտրական հոսանք և բարեկեցիկ բնակարան:

Նույն ցանկությունն է հայտնում նաև 3-րդ դասարանցի Լիլիան: Գյուղում վերջերս, բացի դպրոցից, կառուցվեցին ևս 3 բնակելի տներ, սակայն դա դեռ քիչ է, որ գյուղը կայանա: Անհրաժեշտ է կարգավորել նաև խմելու և ոռոգման ջրի խնդիրը:

Զոհրաբ ԸՈՔՈՅԱՆ

Գրախոսություն

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄ՝ «ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՔԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ»

Հայտնի ճշմարտություն է, որ լեզուն ժողովրդի հոգևոր կենսագրության, պատմության ու ինքնության ամենամաքուր վավերագրությունն է: Սա վերաբերում է լեզվի բոլոր դրսևորումներին, առավել ևս, նրա տարածքային տարբերակներին՝ բարբառներին, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ամբարած պահում է ժողովրդի հոգևոր գույնապակի անկրկնելի մի երանգը: Գիտությունը, սակայն, արձանագրում է մի այլ ճշմարտություն ևս. պետական միասնական լեզվի գերիշխանության պայմաններում նրա բարբառների գործառնությունը հունցում անխուսափելիորեն նեղանում է՝ ի վերջո դատապարտելով դրանք աստիճանական չզոյություն: Հետզհետե սպառնող լեզվական զանգերը հավաքելու, գիտական նկարագրության ենթարկելու և հետագա սերունդներին ավանդելու գիտակցությունը այսօր, առավել քան երբևէ, առաջնորդում է հայ բարբառագիտության երախտավոր մշակներին, գիտական հաստատություններին. սրանց անվերապահ առաջատարն էլ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինն է:

Արմեն Սարգսյանի կազմած այս ծավալուն բառարանը (40.000 բառ), որ տպագրվել է հիշյալ ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդների որոշմամբ, գալիս է ահա իր ծանրակշիռ տեղը զբաղեցնելու հայ բարբառագիտության անդամատանում:

Ղարաքաղի բարբառը, անշուշտ, դուրս չի մնացել հայագետ լեզվաբանների տեսադաշտից. 1901-ին Հրաչյա Աճառյանը առանձին ուսումնասիրություն է նվիրել նրան («Քննություն Ղարաքաղի բարբառի»), տարբեր առիթներով բարբառի քննությանն անդրադարձել են Ա. Ղարիբյանը, Գ. Ջահուկյանը, Ա. Գրիգորյանը և այլք: Բարբառի հիմնավոր ու հանգամանակից լեզվաբանական ուսումնասիրությունը կատարել է Կարո Դավթյանը («Լեռնային Ղարաքաղի բարբառային բարտեզը», 1966):

Արմեն Սարգսյանը բարբառագետ լեզվաբանների նոր սերունդը ներկայացնող շնորհալի մասնագետներից է, որ նախքան սույն բառարանը լույս աշխարհի հանելը հրատարակել է Արցախի բառ ու բանից նվիրված մի շարք գրքեր՝ «Արցախյան հանելուկներ» (2002), «Արցախյան ավանդություններ (2007), «Արցախի բանաձևային բանախոսությունը» (2009), «Շտապի ենթաբարբառը Հարյուրի ենթաբարբառի միջավայրում» (2009), «Արցախյան առակներ» (2011), ինչպես նաև բարբառի, նրա առանձին խոսվածքների բառապաշարը, հնչյունական ու քերականական կառուցվածքը քննող տասնյակ հոդվածներ, գեղություններ:

Այս մեծադիր բառարանին առաջին թուղթիկ ծանոթությունն իսկ պատկերացում է տալիս այն հսկայածավալ հավաքչական ու գիտական աշխատանքի մասին, որ կատարել է հեղինակը երկար տարիների ընթացքում: Բառանյութը հավաքելիս Ա. Սարգսյանն օգտագործել է Արցախի բարբառով հրատարակված բանահյուսական բավական 20.000 էջ), որի տառադարձման ու բառարանագրական մշակման ընթացքում, ինչպես նշում է հեղինակը «Բառարանի» ներածության մեջ, օգտվել է տվյալ խոսվածքը կրող առնվազն երկու բարբառախոսի ծանայությունից: Ներածության մեջ Ա. Սարգսյանը վկայում է նաև, որ բառարանում ընդգրկված նյութի մի զգալի մասը արձանագրված չէ գրավոր աղբյուրներում, քաղված է բանավոր կենդանի խոսքից, սրանց աղբյուրը հեղինակի անձնական դիտումներն են, իր և այլոց կողմից կատարված ծայրագրություններն ու տեսագրությունները, Արցախի հետախույզությանը հեռարձակված բարբառային հաղորդումները:

տարել է հեղինակը երկար տարիների ընթացքում: Բառանյութը հավաքելիս Ա. Սարգսյանն օգտագործել է Արցախի բարբառով հրատարակված բանահյուսական բավական



հարուստ ժառանգությունը, բոլոր նախընթաց այն բառարանները, որոնցում այլ բարբառների նյութին զուգահեռ ներկայացված է նաև Ղարաքաղի բարբառը (սրանց մեջ իր ծավալով ու արժեքով առանձնանում է լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարան» բազմահարուստ աշխատանքը): Մշակվել է բառարանում ներկայացվել է նաև հեղինակի անձնական նախաձեռնությամբ (Արցախի համալսարանի ուսանողների և գյուղական ուսուցիչների օգնությամբ) հավաքված ձեռագիր նյութը (մոտ

20.000 էջ), որի տառադարձման ու բառարանագրական մշակման ընթացքում, ինչպես նշում է հեղինակը «Բառարանի» ներածության մեջ, օգտվել է տվյալ խոսվածքը կրող առնվազն երկու բարբառախոսի ծանայությունից: Ներածության մեջ Ա. Սարգսյանը վկայում է նաև, որ բառարանում ընդգրկված նյութի մի զգալի մասը արձանագրված չէ գրավոր աղբյուրներում, քաղված է բանավոր կենդանի խոսքից, սրանց աղբյուրը հեղինակի անձնական դիտումներն են, իր և այլոց կողմից կատարված ծայրագրություններն ու տեսագրությունները, Արցախի հետախույզությանը հեռարձակված բարբառային հաղորդումները:

Հավաքչական աշխատանքին հաջորդել է հարուստ նյութի բառարանագրական մշակումը՝ տևական ու տքնաջան գործ, որը երևան է հանել Սարգսյան բարբառագետի ու բառարանագրի անվիճելի արժանավորությունները, բարբառի անեմանրբին խորքերն ու ծայրերը բափանցելու, դրանք ներկայացնելու հմտությունը: Բառահոդվածը ընդգրկում է գլխաբառի ոչ միայն իմաստային բացատրությունը՝ բազմիմաստ բառերի բոլոր իմաստների ըստ հնարավորին ամբողջական ներկայացմամբ, այլև դրա ծագումնաբանության, լեզվաճակատի ու քերականական բնութագրերի մասին նշումներ: Դրվատելի է հատկապես Ղարաքաղի բարբառի ինքնատիպ նկարագիրը երևակող շերտի՝ դարձվածների

ըստ ամենայնի ամբողջական ներկայացման ձգտումը. բառահոդվածի մեջ ներառվում, բացատրվում և օրինակներով փաստվում են ոչ միայն բուն (նեղ իմաստով) դարձվածները, այլև լայն իմաստով դարձվածային միավորներ համարվող ասացվածքները, կայուն բառակապակցությունները, հարադիր բայերը, ոճական արտահայտությունները: Այսպես, աշկ(աջք) բառի 17 իմաստներից բացի բերվում և բացատրվում են դրանով կազմված դարձվածները՝ թվով 290, արուն(արյուն) բառահոդվածի մեջ ընդգրկված են 66 դարձվածներ, և այսպես շարունակ:

Նշենք նաև, որ «Բառարանին» կցված ընդարձակ ներածությունը կարող է դիտարկվել որպես Ղարաքաղի բարբառին նվիրված առանձին գիտական ուսումնասիրություն:

Արմեն Սարգսյանին, այսպիսով հաջողվել է ստեղծել հայերենի ամենատարածված ու հարուստ բարբառներից մեկի՝ Ղարաքաղի բարբառի մեծարժեք բառարան-զանգարանը, որը, անկասկած, իր արժանի տեղը կգրավի մեր բառարանագրության ու բարբառագիտության պատմության մեջ:

**Սերգեյ ԳԱԼՍՏՅԱՆ**  
**Բ. Գ. Պ., պրոֆեսոր, ՀՀ**  
**կաստակավոր մանկավարժ**  
**Լեռնիկ ԹԵԼՅԱՆ**  
**Բ. Գ. Թ., դոցենտ**

ԱՅՍԵՂ ԿՅԱՆՔԻ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅՆԵՐԸ

Սիրելի մայրենի լեզուն, սիրելի գիրն ու գրականությունը, նշանակում է լինել առաքինություններով օժտված, վեհ ու վսեմ, հպարտ զգացումներով տոգորված անձնավորություն:

«Մենք մեզ ուժեղ ու զեղեցիկ, պարզամիտ, հարուստ ու տիրական ենք զգում գրականության աշխարհում և ջանում ենք, որ մեր երեխաների ճանապարհը, եթե նրանք անգամ բնագետ կամ խառատ են դառնալու, անցնի գրականության հովտով, - ասում է արձակագիր Հրանտ Մաթևոսյանը.- այստեղ օժվում են մարդասիրությամբ, այստեղով անցածներին կարելի է մարդու և ժողովուրդների կյանք վստահել»:

Նախապես ուզում են խորին շնորհակալություն հայտնել Ասկերանի կրթության բաժնի վարիչ Շահեն Աղաբաբյանին և բաժնի գլխավոր մասնագետ Սվետլանա Ասրյանին, ովքեր նախաձեռնեցին հոկտեմբերի 30-ի զեղեցիկ ու բովանդակալից այցը Ավետարանոցի միջնակարգ դպրոց: Խմբին ուղեկցում էր Ա. Ասրյանը՝ իր գործի իսկական նվիրյալ, մեծատառով մարդ ու ընկեր: Մարդ, որ ամուսն-ազգանունով ճանաչում է Ասկերանի շրջանի բոլոր դպրոցների ուսուցիչներին: Եվ ոչ միայն ճանաչում, այլև ապրում է նրանց հոգեբանական և ուրախություններով: Խոստանում են Ա. Ասրյանի մասին արտի խոսք ասել մեկ ուրիշ անգամ:

Հրավիրվել էին հիմնականում երիտասարդ ուսուցիչներ: Այցի նպատակը բազմաբովանդակ էր: Նախ ճանաչողական, ապա՝ ուսուցողական, ինչու չէ, նաև դաստիարակական և հայրենասիրական: Ասկերանի շրջանի տարբեր գյուղերի դպրոցներից հրավիրված սկսնակ ուսուցիչ-ուսուցչուհիները դեռ նոր են սկսել աշխատանքային իրենց կենսագրությունը: 21 ուսուցիչներից 17-ը աշխատանքի 1-3 տարվա փորձ ունեցող՝ հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի ուսուցիչներ էին:

Պատմական Ավետարանոց գյուղի դպրոցում այդ օրը կազմակերպվեց ընդօրինակման, առաջավոր և ուսանելի փորձի փոխանակման երեք դասալուսն: Մենք մասնակից դարձանք

հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Նվարդ Բաղդասյանի և Լյուդմիլա Գրիգորյանի, մաթեմատիկայի ուսուցիչ Հրաչիկ Արզանյանի դասերին: Փորձեցինք կողքից նայել իրենց գործին անմնացորդ նվիրված մասնագետների արարումին ու մտորել. «Իսկ ես կկարողանա՞մ այսպես...»:

Դպրոցի ուսուցչական կոլեկտիվը տնօրեն Ա. Խաչատրյանի ղեկավարությամբ սիրով ու մեծ ջերմությամբ ընդունեց հրավիրված երիտասարդ ուսուցիչներին: Լսեցինք առաջավոր փորձի փոխանակման երեք դաս. հայ գրականությունից՝ 11-րդ դասարանում (ուս.՝ Ն. Բաղդասյան), հայոց լեզվից՝ 9-րդ դասարանում (ուս.՝ Լ. Գրիգորյան) և մաթեմատիկայից՝ 11-րդ դասարանում (ուս.՝ Հ. Արզանյան):

Ուզում են ներկայացնել մի մարդու, ում միտքն ու սիրտը գործում են համատեղ, ուսուցչուհու, որի խոսքը զուգակցվում է արտի թրթռով: Իսկ այդ նշանակում է, որ նրա նվիրումն իր մասնագիտությանն անմնացորդ է:

Ն. Բաղդասյանը հանրապետությունում ճանաչված մասնագետ է: Վերջերս նա արժանացել է նախարարության մրցանակին՝ «Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետություն» անվանակարգում հաղթող ճանաչվելու համար: Մեզ համար մեծ պատիվ էր լսել նրա վարած դասը: Իսկ որ նա, իրոք, հմուտ նավապետի նման նավը տանում է դեպի օվկիանոսի անհունները՝ խուսափելով այսբերգներից ու խուճերից, ակնհայտ էր: Նա իր մտքի սլացքով ու հոգու թրթռով ուղեկցում էր մեզ դեպի անհաս ծիածանների աշխարհ:

Դասի թեման Ամենայն հայոց բանաստեղծի քառյակներն էին. հայոց լեզվի և գրականության կարիքները դարձել էր յուրօրինակ Վերնատուն:

Դասարանում ստեղծվել էր թունամյանական աշխարհի ու մթնոլորտ: Մեծ Լոռեցու անմահ հոգին ասես թևածում էր դասարանում և իր քննախոյզ ու խոհեմ հայացքով նայում ու հրճվում՝ տեսնելով ու զգալով «իմ նոր հայրե-

նիք, հզոր հայրենիք» մարգարեության իրականացումը:

Ուսուցչուհին իր երգեցիկ ու դողդոջ ծայրի ողջ ելևէջներով ներկայանեցին տեղափոխել էր Լոռու Դսեղ գյուղը, Թիֆլիս ու Երևան: Իսկ երբ ներս մտավ բարակիրան, երկար հյուսքերով, մահապետական գյուղի տարագով Անուշը և քաղցր ծայրով երգեց «Ասում են ուռին», հիացմունքը սահման չունեց:

Ուսուցչուհին արտասանում ու մեկնաբանում էր Թունամյանի քառյակները, ներկայացնում նրանց խոհախրատական բովանդակությունը:

*Ինչքան ցավ էմ տեսել ես, Նենգ ու դավ էմ տեսել ես, Տարել, ներել ու սիրել, Վատը լավ էմ տեսել ես:*

«Արանում է Թունամյանի մեծությունն ու հանճարեղությունը. մեկնաբանում է ուսուցչուհին, վատի մեջ լավ տեսնելու կարողություն կարող են ունենալ միայն լավատես, կենսասեր ու կյանքի փորձով իմաստնացած մարդիկ, ինչպես Մեծն Թունամյանն է»:

Թունամյանական դասի հանճարեղ ընդհանրացումը կատարյալ էր ձևակարպված.

*...Հուր եմ դառել, լույս տվել, Լույս տալով եմ սպառվել:*

Երանի՜ նրանց, ովքեր կարողանում են թե՛ կենդանության օրոք և թե՛ մահվանից հետո լույս դառնալ այլոց ճանապարհին: Ովքեր իրենց կենսակերպով հույսի ու լույսի շող են և սպառվում են լույս տալով, ինչպես փոքրիկ դողդոջ մոմը:

Լսելով Ն. Բաղդասյանի դասը, տեսնելով նրա ներքին աշխարհից ճառագող լույսը, հասկացանք, որ մարդկային սրտեր վեհացնող ու ազնվացնող լույսը ճառագում է իրենց գործին անմնացորդ նվիրված մարդկանց հոգիներից:

Երիտասարդ ուսուցիչների աչքերը փայլում էին, նրանք առնչվել էին իսկական մասնագետի, մայրենիի նվիրյալի ու առաջալի փորձին: Երանք դեռ ժամանակ կունենան խորհելու իրենց ընտրած դժվարին, բայց ազնիվ ու

պատվավոր մասնագիտության մասին:

Հաջորդ ժամը դասալուսն կատարեցինք 9-րդ դասարանում՝ ուսուցչուհի Լ. Գրիգորյանի մոտ: Փորձառու ուսուցչուհին թունամյանական աշխարհից մեզ տեղափոխեց մեր ոսկեղենիկ հայոց լեզվի հարուստ ներշնչարանը: Ապահովվում էր միջառարկայական կապը: Դասի բոլոր փուլերը տրամաբանորեն փոխկապակցված էին:

Իսկ երբ քննարկվեցին լսած երեք դասերը, պարզվեց, որ մաթեմատիկայի առաջնակարգ մասնագետ Հ. Արզանյանը սկսնակ ուսուցիչներին տեղափոխել էր թվերի բազմության հրաշք աշխարհը և ստիպել մտածելու, որ եթե սիրում են քո աշխատանքը, ապա ցանկացած առարկայի դասավանդում կարող ես դարձնել հետաքրքիր, դիտողական ու Հ. Արզանյանի պարագայում՝ նաև... քնարական:

Առիթն օգտագործելով՝ այցելեցինք Արցախյան պատերազմում մահատակված Ավետարանոց գյուղի հերոսների հիշատակին կանգնեցված հուշարձանը: Խոնարհվեցինք ու արժևորեցինք զույգ արժիվներով ու հայկական խաչքարով հուշարձան-կոթողի իմաստը. «Արժիվները սավառնում են բարձունքներում, արժիվները մեռնում են լեռներում: Բարձունքից հսկեք Արցախ աշխարհի անդորրը, քաջ արցախցիներ...»:

Ավետարանոցի միջնակարգ դպրոցի ստեղծագործ կոլեկտիվն իր կոչման բարձրության վրա է: ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Ի. Աբայանի անվան դպրոցում կյանքի են կոչվում հին ու նոր ավանդույթները:

Բաժանվեցինք հոգեպես հարստացած ու վեհացած, բաժանվեցինք՝ նորից հանդիպելու ակնկալիքով:

**Ռամելա ԱՌԱՍՄՅԱՆ**  
**Պատարայի միջն. դպրոցի հ. լեզվի**  
**և գրակ. ուսուցչուհի,**  
**փոխտնօրեն**

# ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ԴԱՍՏԻԱՐԱՎԵԼ ԴԱՍՏԻԱՐԱՎԵԼՈՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ

«Եթե մանկավարժությունն ուզում է մարդուն դաստիարակել բոլոր տեսակետներից, ապա նախ նա պետք է ճանաչի նրան բոլոր տեսակետներից»:

## Կ.Գ. Ուշինսկի

Աշակերտի ուսումնասիրությունը պահանջում է դպրոցականի անձի հոգեբանական հատկությունների իմացություն, ինչպես նաև մանկավարժահոգեբանական հետազոտության սկզբունքների ու մեթոդների տիրապետում: Դպրոցականի մտավոր կարողությունների, բնավորության, առողջության և այլ հատկությունների մասին օբյեկտիվ տվյալներ ստանալու համար դպրոցի մանկավարժները պետք է՝

ա՝ դպրոցականին ուսումնասիրեն բնական պայմաններում, նրա կենսագործունեության պայմանների հետ միասնությամբ մեջ:

բ) մշտապես հաշվի առնեն անհատական ու տարիքային առանձնահատկությունները, նորագոյացությունները, ճգնաժամային փուլերը:

գ) դպրոցականին ուսումնասիրեն ամբողջապես, նրա բոլոր դրսևորումներում:

Դպրոցականի անձի ուսումնասիրությունն իր մեջ ընդգրկում է ամենից առաջ ընտանիքում նրա կյանքի պայմանների հետ ծանոթացում: Ինչպիսիք են ընտանիքի կազմը, նրա նյութական ապահովվածությունը, ընտանեկան ավանդույթները, հարաբերությունները ընտանիքում, ուսման պայմանները, ծնողների առողջությունը, հիվանդությունների նկատմամբ երեխաների ժառանգական նախատրամադրվածությունը, դաստիարակության ոճերը և ընտանիքում, ընտանիքի շրջապատը:

Մյուս կարևոր հարցը դպրոցականի վերաբերմունքն է շրջապատողների նկատմամբ: Անհրաժեշտ է վերհանել նրա վերաբերմունքը ուսման և աշխատանքի նկատմամբ, որ առարկաներն է սիրում, ինչքանով է սխտեմատիկաբար սովորում, ինչպես է զարգացած ինքնուրույնությունը, ինչպես է վերաբերվում ֆիզիկական աշխատանքին:

Դպրոցականի և աշակերտական կուլտիվի հոգեբանական առանձնահատկությունների և դաստիարակվածության մակարդակի հայտնաբերման օբյեկտիվությունը կախված է հետազոտության բազմազան մեթոդների օգտագործումից: Անձը և նրա ակտիվությունը կարելի է ընկալել, ուսումնասիրել երկու կողմից, երկու եղանակով:

ա) «ներսից», երբ մարդն ընկալում է իր սեփական զգայությունները, մտքերն ու զգացմունքները, «սուբյեկտիվորեն»:

բ) «դրսից»՝ դիտելով իր և ուրիշների կյանքն ու գործունեությունը:

Ըստ այդմ էլ հոգեբանության մեջ առանձնացնում են սուբյեկտիվ մեթոդը՝ ներհայեցողությունը և մի շարք օբյեկտիվ մեթոդներ՝ դիտում, գիտափորձ թեստերի մեթոդ, հարցաթերթիկների մեթոդ արխիվային մեթոդ, հոգեբանական խաղեր:

Ուսումնասիրատիարակչական գործընթացում ուսուցչի համար ավելի նպատակահարմար է կիրառել դիտման մեթոդը: Դա անձի և կուլտիվի վարքի և կենսագործունեության դրսևորումների հատուկ կազմակերպված ընթացումն է: Ամենից առաջ կարևոր է պարզել՝ ինչն ուսումնասիրել, ինչը դիտել և ինչպես արձանագրել դիտման արդյունքները: Դիտումը լինում է համատարած և ընտրովի: Համատարած դիտման ժամանակ դասարանի ղեկավարն արձանագրում է այն ամենը, ինչ հաջողվում է նկատել աշակերտների վարքի մեջ, ակտիվայտված մտքերում, հուզական ռեակցիաներում: Ընտրովի դիտման դեպքում նշվում են առանձին գործընթացներ և երևույթներ,

օրինակ՝ տղաների և աղջիկների միջև փոխհարաբերությունները, դպրոցականի մոտ հասարակական աշխատանքի կարողությունների առկայությունը և այլն:

Դիտումը սովորաբար անց է կացվում ուսուցման ու դաստիարակության բնական պայմաններում, աշակերտի գործունեության տարբեր բնագավառներում: Օրինակ՝ դաստեղը դիտելով աշակերտներին իր և մյուս ուսուցիչների դասերին, ի հայտ է բերում նրանց իմացական գործունեության առանձնահատկությունները, ուսումնական առարկայի նկատմամբ վերաբերմունքը, նրանց հետաքրքրություններն ու ընդունակությունները, կարողությունները ու հմտությունները, կամային որակները և այլն: Դպրոցականի հայացքները, համոզմունքներն ու իդեալները հայտնաբերելու համար մեծ նշանակություն ունեն գրականության, պատմության, հասարակագիտության դասերին, ինչպես նաև դաստեղական ժամերին ու բանավեճերի ժամանակ նրանց պատասխաններն ու կարծիքները:

Աշակերտների անբարենպաստ վարքագծի հայտնաբերման վերաբերյալ կատարված դիտումների ժամանակ բացահայտվել է, որ նրանց մեծ մասն ունի ինչպես ուսման հետ կապված դժվարություններ, այնպես էլ վարքագծի շեղումներ:

Երեխաների վարքագծային այս կամ այն շեղումները շտկելու և առաջացած խնդիրները լուծելու համար նախ և առաջ պետք է պարզել դրանց առաջացման պատճառները:

Կարևոր հարց է երեխաների ընտանիքների տիպաբանական ճանաչումը և վերլուծական կարողությունը: Պետք է նշել, որ «դժվար երեխաների» ճնշող մեծամասնությունը և կարգ ու կանոն խախտողներն այն ընտանիքից են, որոնցում գերակշռում են ծնողների բարոյագուրկ վարքագիծը, տարածայնությունները կամ կոյր սերը երեխաների նկատմամբ:

Երեխաների վարքագծային շեղումների պատճառներից են ընտանեկան կյանքում տեղի ունեցող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ընտանիքի անկումը, նոր ընտանիք ստեղծելու փորձը և այլն: Նմանատիպ երևույթները սթրեսավտանգ են երեխայի հոգեկանի ձևավորման և աղապտացման բուն շրջաններում՝ ճգնաժամային տարիքում: Ընտանիքի դաստիարակչական ուժը, նրա դրական ներգործությունը դեռահասի վրա կարելի է պահպանել, եթե սթրեսային վիճակները, ամեն ինչ կորցնելու վախի զգացումը չէզոքացվեն սփոփանքի և ապրումնացման միջոցով: Հայտնի է, որ բոլոր այն երեխաները, որոնք դաստիարակվել են ավանդապահ, բարոյահոգևոր հարուստ սովորույթներով ընտանիքներում, կյանքի դժվարին ժամանակահատվածում և անբարենպաստ պայմաններում կարողանում են դիմանալ, չկորցնել հույսը և տոկոսնությունը: Միաժամանակ նրանք դրսևորում են անսովոր աշխատասիրություն: Հենց այս երեխաների միջավայրում է նկատվում բավական բարձր մակարդակի ընդհանուր զարգացում և բարեկրթություն: Եվ երբ գալիս է բեկումն շրջանը, դեռահասի վրա բացասական ազդեցությունների ժամանակը, երեխայի ներաշխարհում արդեն ձևավորված է լինում ամուր դրական հիմք, որը թույլ է տալիս հաղթահարել արտաքին անբարենպաստ գործոնները:

Երեխայի դաստիարակվածության հարցին առնչվում են նաև ուրիշ հանգամանքներ՝ սոցիալական խնդիրները, ընտանիքում երեխաների թիվը, նրանց ծննդյան հերթականությունը, դեռահասը տղա՞ է, թե՞ աղջիկ:

Դժվարության առաջացման մյուս կարևոր շարժառիթը սխալ հարաբերու-

թյուններն են ծնողների և երեխաների միջև: Երեխաների անբարենպաստ վարքագծին նպաստում են ծնողների ոչուրազգիռ լինելը, անհարգալից վերաբերմունքը երեխայի անձնական արժանապատվության նկատմամբ կամ անտարբերությունը, ծնողների անհարկի ներդրումությունը, երեխայի եսակենտրոն դիրքը ընտանիքում, մանկավարժական միասնական պահանջների բացակայությունը ընտանեկան դաստիարակության մեջ:

Երեխաների վարքագծային շեղումների պատճառը հաճախ նաև ուսուցիչների անխոհեմ վերաբերմունքն է: Օրինակ, ուսուցչի սխալ վերաբերմունքը երեխային կյանքի վատ պայմանների հանդեպ բոլորի ներկայությամբ կարող է երեխայի մոտ ազդեցիկ առաջացնել: Առավել վտանգավոր են անհարմար կշտանքները մեղավորի հասցեին, երբ յուրաքանչյուր նոր գազնացրի դեպքում հիշեցնում են նրա բոլոր հին «մեղքերը»: Դա երեխային հանգեցնում է այն կարծիքին, որ մանկավարժն անարդար է իր հանդեպ: Առաջանում է չարության և վրեժխնդրության զգացում: Նա կորցնում է սովորելու ցանկությունը և չի համախուժ դասերին: Շատ կարևոր գործոն է ուսուցչի անթաքույց հակակրանքը, բացասական դիրքորոշումը դժվարակիրների խախտած կարգուկանոնի նկատմամբ, ծաղրական վերաբերմունքն աշակերտի արտաքին տեսքի, ընկերոջ կամ ընկերուհու ընտրության, հետաքրքրությունների, նախասիրությունների և ճաշակի նկատմամբ:

Ելնելով հոգեբանամանկավարժական խնդիրների էությունից և կատարված դիտարկումներում տեղ գտած վարքագծային շեղումների առանձնահատկություններից՝ առաջարկում են շտկման հետևյալ ուղիները.

1. Ճանաչել և հարգել երեխայի անձը.
2. Պարզ ու անկեղծ գրույցը վստահության մթնոլորտում կօզմի երեխայի հոգու խորքը թափանցելուն.
3. Նրբամկատ վերահսկողությունը .
4. մանկավարժական միասնական պահանջների սահմանումը.
5. Երեխայի սխալ արարքը ի հայտ բերելով՝ բացատրություններով ուղղորդել նրան դեպի ճիշտը, ընդունելին, նրան տալ ընտրության հնարավորություն.
6. Երեխայի ռեժիմի և ազատ ժամանակի կազմակերպումը :
7. Խրախուսանքի և պատժի մեթոդների հմտորեն օգտագործումը:

Դաստիարակչական տեսակետից պատիժն օգտակար է միայն այն դեպքում, երբ սովորողն իր կատարած արարքի համար վատ է զգում և ձգտում է գործով ուղղել իր վարքը: Պատժի հոգեբանական ներգործության ուժը որոշվում է դրա առաջացրած ապրումների բնույթով: Ընդ որում՝ պատժելով աշակերտին, պետք է նկատի ունենալ նրա անձի առանձնահատկությունները՝ խոցելիությունը, հուզառաֆելտիվ բնույթը, ինքնագնահատականը, սեփական արժանապատվության զգացմունքի զարգացվածություն աստիճանը և այլն: Հի կարելի թույլ տալ, որ պատիժը երեխայի մեջ առաջացնի անհուսալիության վիճակ, իր թերությունները հաղթահարելու հնարավորության հավատի կորուստ: Ուստի աշակերտի ճիշտ և մանրամասն ավտորոշման դեպքում երեխայի վարքագծային շեղումները չեն դիտվի որպես դիտավորություններ, և ուսուցիչը կտեսնի դրա ավելի խոր պատճառներն ու կկարողանա ճիշտ կողմորոշվել երեխայի հոգեկանի հետ վերաբերմունքի ժամանակ:

# ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ ԱՇԱԿԵՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՋԱՆ

Դպրոցում առարկայական դասերին նաև դաստեղական ժամերին հաճախ հարկ է լինում օգտվել մանկավարժական այնպիսի մեթոդից, ինչպիսիք ուսումնական բանավեճն է: Ուսումնական բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների նպատակամետ ու որոշակիորեն կարգավորված փոխանակություն է՝ հանուն ճշմարտության որոնման: Բանավեճի միջոցով սովորողը հնարավորություն է ունենում ոչ միայն խորությամբ քննել շոշափվող խնդիրը, այլև եզրահանգումներ անել, ամրապնդել իմացածը, դիտարկել մշակույթը զարգացնել, ինչպես նաև իր մեջ սեփական կարծիքը պաշտպանելու կարողություն և այլն:

Բանավեճի ժամանակ առաջ է քաշվում մեկ առանձին թեմա կամ հիմնահարց, և այն կառուցվում է որոշակիորեն սահմանված կարգով: Այսօր արտասահմանյան, ինչու չէ, նաև հայաստանյան դպրոցներում հաճախադեպ է դարձել բանավեճով դասի անցկացումը: Հայաստանի տարբեր դպրոցներում գործում են բանավեճի ակունքներ, նույնիսկ կազմակերպվում են անհատական բանավեճի առաջնություններ: Շոշափվող հիմնական թեմաներն են՝ «Կոմֆլիկտը կյանքում», «Հանդուրժողականության միջոցառում օր» (անց է կացվում նոյեմբերի 16-ին), «Հայ կնոջ իրավունքները», «Ընտանիքի դերը երեխայի պահպանման և ինքնագնահատականի մեջ», «Ովքեր են հավատարիմ ընկերները», «Համագեցեսող դպրոցում»:

Ելնելով տարիքային առանձնահատկություններից՝ միջին և ավագ օղակներում կարելի է առաջարկել նաև այնպիսի թեմաներ, որոնք աշակերտի մոտ ձևավորում են բարոյական, զեղազիտական ու հայեցի դաստիարակություն: Ասենք, բանավեճի այնպիսի թեմաներ, որոնք աշակերտին մտածելու, դատելու, օրինակներով փաստելու հնարավորություն են տալիս՝ «Մարդ էլ կա, մարդ էլ», «Այագան, որ մեք ուզում ենք մեզ համար»: «Ես-ը և մենք-ը» կամ «Աշակերտը հասարակության անդամ»: «Բարեկամն ով է...»: «Համապատասխան երեխայի կյանքում» և այլն: Նման մեթոդով կազմակերպված բանավեճի կարելի է հրավիրել նաև ծնողներին, որովհետև այս հարցում երեխաների և ծնողների միջև հաճախակի են կոնֆլիկտներ առաջանում:

Միջև հիմնահարցի ձևակերպումը կարող են լինել տեսանյութի դիտում, ծայնագրության ունկնդրում, ասումը, մեջբերումներ: Այստեղ դարձյալ շատ կարևոր է համացանցի դերը: Ընդ որում, ՏՏՏ միջոցների գործածությունը կարող է հենց ուղեկցել բանավեճին, դառնալ իբրև փաստարկ, ապացույց կամ հիմնավորում առաջադրված մտքի համար և նոր եզրահանգումների աղբյուր: Բանավեճն սկսելուց առաջ դասուղեղ պետք է ստեղծի բարենպաստ հոգեբանական մթնոլորտ, իսկ արդեն բանավեճի ընթացքում հետևի, որ այն վիճարկության, լեզվակրճի չվերածվի, յուրաքանչյուր աշակերտ պետք է հասկանա, որ իր մասնակցությամբ բանավեճը պիտի հասցնի ակնկալված ավարտի՝ ճշմարտության բացահայտմանը:

Աշակերտները, մասնավորապես ավագ խմբերում, հաճախ չունեն իրար լսելու, զիջելու բարեկրթությունը: Դասուղեկի խնդիրն է դառնում նաև այս կարևոր հատկանիշները նրանց մեջ սերմանելու, դաստիարակելու գործը, լավագույն օրինակն ինքը դասուղեկն է ցուցադրում: Փորձառու ուսուցիչը բանավեճի ժամանակ պետք է նախընտրի չմիջամտել կամ շատ քիչ միջամտել սովորողների միջև ծավալվող հարց ու պատասխանին, կարծիքների ձևակերպմանը: Ուսուցիչը պետք է ստեղծի նաև անհրաժեշտ դադարներ՝ աշակերտներին մտածելու հնարավորությունը բնօրինակում: Հաճախ անհրաժեշտ է լինում ուսուցչի բացատրող հակիրճ խոսքը կամ մի փոքրիկ խթան՝ փակուղի մտած իրավիճակից դուրս գալու համար: Իսկ եթե աշակերտն իր խոսքի մեջ թույլ է տալիս սխալ ձևակերպումներ, ոչ հայեցի արտահայտություններ կամ ասելիքի անհստակություն, ուսուցչի միջամտությունը դառնում է անխուսափելի՝ պահպանելով մանկավարժական տակտը: Բանավեճի ժամանակ շատ մեծ է թեմայից շեղվելու հավանականությունը: Միաժամանակ մի քանի հարցադրումների կամ տեսակետների առաջադրումը կարող է բերել ոչ ցանկալի արդյունքի, ուստի ուսուցչից պահանջվում է ուշադիր հետևել՝ բանավեճը մինչև վերջ ցանկալի արդյունքի հասցնելու համար:

Նշեցնենք, որ բանավեճը նպաստում է աշակերտի իմացության դաշտի ընդլայնմանը, ազատ խոսքի ձևավորմանը, երևույթներին նոր հայացքով նայելու հնարավորություն է տալիս, սակայն երբեմն էլ աշակերտը կարող է հանգել ոչ ճիշտ եզրահանգումների և մնալ իր տեսակետին: Սա, կարելի ասել, բանավեճի թերություններից է, ուստի դաստեղական ժամն ավարտելուց առաջ ուսուցչի խնդիրն է ամփոփել բանավեճի արդյունքները, գնահատել յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը, առանձնացնել այն կարևոր ձևակերպումները, որոնք կարող են ելակետային լինել հաջորդ թեմայի ուսումնասիրության համար:

**Ն.ԴԱՎԹՅԱՆ**  
**ՀՀ ԿԳՆ ԿԱԻ ԼՂՀ**  
**մասնաճյուղի մասնագետ**

**ԴԻՄԱ ԱՐԱՆՅԱՆ**  
**ԿԱԻ հոգեբանության**  
**մասնագետ**

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ

ՀԻՆՉ ՕՐ՝ «ՄԻՒԻԹԱՐ ՍԵՔԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՆԱՍՆԱԻՐՈՒՄ

Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի նախաձեռնությամբ (կազմակերպիչ՝ մեթոդիստ Անահիտ Մետրոպոլիտանյան) մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների կազմակերպիչ-փոխտնօրենները կրթամշակութային ծրագրով նոյեմբերի 1-5-ը եղան Երևանի «Միւիթար Սեքաստացի» կրթահամալիրում:

Ուղևորության ընթացքում նրանք այցելեցին Ա. Բակունցի, Պ. Սևակի, Սպարապետ Վ. Սարգսյանի տուն-թանգարաններ: Քանի որ այցը նաև յուրատեսակ ուխտագնացություն էր, մոմ վառեցին յոթ եկեղեցիներում՝ Նորավանք, Խոր Վիրապ, Երևանում գտնվող՝ Սբ. Սարգիս, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Երրորդություն և Գեղարդ ու Մայր տաճար Սուրբ Էջմիածնում:

Երևանում գտնվելու օրերին ուսուցիչները քարոզարկներ և խորհրդակցություններ անցրեցին իրենց գիտելիքները՝ այցելելով Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի տուն-թանգարաններ, հարգանքի տուրք մատուցեցին Եռաբլուրում հանգչող ազատամարտիկների, Պանթոնում՝ հայրոց մեծերի հիշատակին: Երեկոները վայելեցին ներկայացուցիչներ դիտելով դրամատիկ, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոններում:

Հինգ օր նրանք վայելեցին «Միւիթար Սեքաստացի» կրթահամալիրի ջերմ, անկաշկանդ հյուրընկալությունը: Կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի և դպրոցների ղեկավարների ուղեկցությամբ արցախցիները ծանոթացան կրթահամալիրի գործունեությանը: Այն առանձնահատուկ է իր նորարարությամբ: Արցախցի ուսուցիչները տեսան, թե ծայրամասում գտնվող խորհրդային տիպային մանկապարտեզներն ու դպրոցներն ինչպես են վերափոխվել ժամանակակից կրթահամալիրի, որն ընդգրկում է մանկապարտեզից մինչև քոլեջներ, որտեղ իշխում են ազատ միտքը, ստեղծագործական մթնոլորտը, և որտեղ հետազոտական աշխատանքներ են իրականացնում բոլորը՝ սովորող թե ուսուցիչ: Հիրավի, մոբիլ այդ կրթահամալիրը բազմաթիվ կողմերով հիացրեց այցելուներին: Նորարարական այս դպրոցին դեռ առիթ կունենանք անդրադառնալ:

Սեփ. լրատվություն

Աշնանային մեղմ, պարզ ու պայծառ եղանակ, քարեղեն երկինք, կարմիր խարույկով բռնկված գույնզգույն ծառեր... Լեռնային Հայաստանի աշնանային ինքնատիպ բնապատկեր: Եվ այս մթնոլորտում այցելություն գեղեցկության երգչի ու սերմնացանի՝ Ակսել Բակունցի տուն-թանգարան: Դարպասներից ներս աշունը ներկայացավ առավել շքեղ գույներով ու նրբերանգներով, լսելի էր բնության խորհրդավոր ծայրը, ի գարմանս այցելուների՝ ծաղկած վարդենիների արանքում երևաց ալպիական մանուշակը: Այգու գեղեցկությունն ընթռչնելուց հետո մտանք թանգարան: Թանգարանի աշխատակիցը հանգամանորեն ներկայացրեց նուրբ ու զգայուն արվեստագետի՝ վերելքներով ու հիասթափություններով լի կյանքը և ողբերգական մահը:

Գորիսի հայտնի լավաշով ու պանրով նախաճաշելուց, Նորավանքում և Խոր Վիրապում մեր աղոթքն առ Աստված հղելուց հետո մտանք Պարույր Սևակի տուն-թանգարան: Առատության և խայտաբղետության տոնահանդես էր ամենուր: Տուն-թանգարանի պատերին մեծ վարպետությամբ պատկերված են Պ. Սևակի կյանքի տարբեր շրջանները: Նայողին թվում էր, թե մասնակիցն է Սևակի կյանքի վայրիվերումների: Առավել տպավորիչ էր Սևակի մեծահոր նկարը. գորղը մարդկանց դիմակները հանելու, ինքնաճանաչման, առավել ոյուրին ապրելու և շնչելու, մարդկային արժանապատվությունն ու ազնվությունը վեր դասելու կոչեր էր անում (հիշենք Սևակի «Եղիցի լույս» ժողովածուի «Դիմակներ» շարքը): Լսեցինք Պարույր Սևակի ծայնագրություններից պատահիկներ, հաղորդակից եղանք նրա անզուգական պոեզիային և մեծ

ողևորությամբ հասանք ՀՀ և ԼՂՀ ազգային հերոս, Սպարապետ Վազգեն Սարգսյանի թանգարան: Հայրենասիրության, ազգասիրության և նվիր-

ջորդ օրերին դարձյալ մեզ հետ էին կրթահամալիրի բարեհամբույր աշխատողները:

Մեծ Լոռեցուն տված Չարենցի բնութագրի խորհրդավորությունն ու շարունակականությունը («Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան, Բայց թունամայան է ամհաս Արարատը մեր նոր քերթության») զգացինք Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի թանգարանում:

Թանգարանը կահավորված էր թիֆլիսում թունամայանի ունեցած



վածության հերթական դասն այստեղ առանք:

Մեծ սիրով և ժպիտներով մեզ սպասում էին «Միւթար Սեքաստացի» կրթահամալիրում՝ տնօրեն Ա. Բլեյանի գլխավորությամբ: Հյուրընկալ կրթախումբ իշխող փոխադարձ վստահությունը, փոխըմբռնումը, ընկերական ջերմ ու անմիջական հարաբերությունները երևացին առաջին իսկ րոպեներից: Թափանցիկ դասասենյակներ, բաց կարիքներ, երգ ու պարով ուղեկցվող՝ ազատ խոսքի, ապրելու և ստեղծագործելու լայն հնարավորություններ, աշակերտների մեջ ազգային արմատներին, Հայ Առաքելական եկեղեցու ավանդույթներին ու հայ ժողովրդի պատմությանը ամուր կառչելու անթիվ-անհամար ընդհանուր պարապմունքներ:

Մշակութային մեր ծրագրի հա-



տան պարագաներով: «Լոռու ծորի» համայնապատկերի (անդնդախոր ծորեր, ամպերի մեջ մխրձված ժայռեր, գեղատեսիլ բնություն, ավերից դուրս եկած Դևբեդ) ցուցադրությունն ուղեկցվում էր «Անուշ» օպերայի հնչյուններով: Տեսարանը ներկայանում էր մտավի հասցրեց թունամայանի ծննդավայր: Չգարմանք, եթե ասեն, որ այցելուներին անձամբ ողջունեց ինքը՝ Թումանյանը (լուսային էֆեկտով

եր ողջունը պատրաստվել): Մենք կրկին հաղորդակից եղանք նրա պոեզիայի ժողովրդայնությանը, դասական պարզությանն ու խորությանը, գրողի ստեղծագործություններում մեծ տեղ գտած մարդասիրությանն ու ժողովրդասիրությանը, հոգեբանական խորությանն ու առողջ գաղափարախոսությանը: Թանգարանի աստիճանները խորհրդանշում են հայ ժողովրդի հանճարի ապրած 54 զարուհները: Քանի որ ամենուր նրա ոգու հանճարի հավերժության կնիքն էր դրված, ակամայից հիշեցի բանաստեղծի տողերը՝ «Տիեզերքում աստվածային մի ճանփորդ է իմ հոգին»:

20-րդ դարի մյուս մեծ բանաստեղծի՝ Եղիշե Չարենցի կյանքին, գրական-մշակութային գործունեությանը, ստեղծագործական աշխատանքին, բարդ, հակասական ու հարուստ հերաշխարհին, զգայուն ու խորունկ հոգուն և տաղանդի ուժին առավել մոտիկից ծանոթացանք գրողի տուն-թանգարանում:

Հաջորդ օրերին եղանք նաև Սուրբ Սարգիս, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներում, Գեղարդում, Գառնիի հեթանոսական տաճարում, Եռաբլուրում, Պանթոնում: Հատուկ Արցախից ժամանած հյուրերի համար Սուրբ Էջմիածնում կատարվեց մկրտության խորհուրդը, իսկ Սուրբ Երրորդություն եկեղեցում «Միւթար Սեքաստացի» կրթահամալիրի 7- րդ դասարանի աշակերտների՝ գրաբարի դասին ներկա լինելուց և քահանայի օրհնությունը ստանալուց հետո դրական լիցքերով վերադարձանք Արցախ:

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ Սյրեպ. հ. 6 հիմն. դպրոցի ՄՅՂԳԿ

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՎ ԵՆ ՄԻՐՈՒՄ

խաղաղ բույրն ավելի էր մեզ ոգևորում:

Մտանք ներս: Սյունեցի կնոջ ձեռքերի ճարպիկ ու ներդաշնակ շարժումների շնորհիվ ծնվում է անուշահամ ու անուշաբույր լավաշը: Ակամայից հիշեցի Ա. Սակեղոնացու պատասխանն իր զինվորների հարցին. - Չորավար, հայերը լավաշ են

քից ծանրացած խնձորենիներն ու տանձենիները, ասես խոնարհվելով, ողջունեցին մեզ: Կարմրաթուշ խնձորը ձեռքիս մեջ շուռումուռ տալով, հիանում էի ու հանկարծ լսեցի.

- Այո, Սևակը սիրում էր նաև այգուն աշխատել, մշակել այն: Այստեղ նա ակտիվ հանգիստ էր անցկացնում: Սևակի ձեռքով տնկած այգին է...

Շարունակեցինք մեր ճանապարհը, և մեր առջև բացվեց հիանալի տեսարան՝ Արարատյան խաղաղ դաշտավայրը: Այստեղ մենք եղանք Վ. Սարգսյանի տուն-թանգարանում: Յուրաքանչյուրս երկակի պահ ապրեցինք, յուրաքանչյուրս մտովի խոսում էինք նրա հետ.

- Սպարապետ, այսօր քո ոգին է վառվում քո հարազատ Արցախում, և քո գաղափարակիրն է ամեն



կախել բերդի պարիսպներից: Ի՞նչ է խորհրդանշում:

- Հայերն ուզում են ասել, որ իրենք հաց արարող խաղաղ ու ստեղծագործ մարդիկ են:

Ու նրանք չպաշարեցին հայոց բերդը:

Այնուհետև մենք եղանք Նորավանքի եկեղեցական համալիրում, որն աչքի է ընկնում իր յուրատիպությամբ: Շարունակեցինք ճանապարհը դեպի Պարույր Սևակի տուն-թանգարան: Հիացանք «Աստծո քարտուղարի» թանգարանով: Իսկ նրա արտասանությունները կենդանի ձայնով պարզապես ապշեցրին մեզ, ու չէինք ուզում հեռանալ թանգարանից: Թանգարանին կից այգուն բեր-

մի արցախցի: Երևանում մեզ սիրով ու ջերմությամբ դիմավորեցին «Միւթար Սեքաստացի» կրթահամալիրի ղեկավար Ա. Բլեյանն ու ուսուցիչները: Մենք պիտի ծանոթանայինք կրթահամալիրի ուսումնադաստիարակչական աշխատանքներին, կատարեինք փորձի փոխանակում, հանդիպեցինք ուսուցիչներին ու աշակերտներին:

Մենք ծանոթացանք համալիրի դպրոցների աշխատանքային ոճին: Ասեն, որ շատ տպավորիչ էր պարտեզային և նախապատրաստական խմբերի թե՛ աշխատանքը և թե՛ դասասենյակները: Եղանք համալիրի ավագ դպրոցում, արհեստի քոլե-

ջում, գեղարվեստի քոլեջում: Համալիրը բաց համակարգ է, ուր յուրաքանչյուր օղակ ուղղակի թե՛ անուղղակի կապված է մյուսի հետ և աշխատանքով լրացնում ու օգնում է նրան: Առկա են բոլոր պայմանները երեխայի զարգացման ու բազմակողմանի դաստիարակության համար: Երեխան ուսման հետ միասին լրացուցիչ կրթություն է լիովին ստանում դպրոցում:

Հանդիպում ունեցանք համալիրի ղեկավար Ա. Բլեյանի հետ, մտերմիկ գրույց անցկացրինք: Խոստացանք, որ փոխադարձ հանդիպումները շարունակական կլինեն, ի շահ մեր հասարակության և հայրենիքի:

Մեր հնգօրյա էքսկուրսիան, որ անցավ Հայաստանի ճամփեքով, շատ հետաքրքիր ու բովանդակալից էր, որի համար խմբի անունից շնորհակալություն են հայտնում էքսկուրսիան նախաձեռնող ու կազմակերպող Ա. Մեսրոպյանին, քաղաքապետարանի կրթության բաժնի պետ Կ. Սարգսյանին և բոլոր այն մարդկանց կայանալուին:

Եվս մեկ անգամ ևս համոզվեցինք, որ հայ ժողովուրդը հաց արարող ու ստեղծող ժողովուրդ է, աշխատանք ու նաև հանուն հայրենիքի մարտիրոսավոր:

Թող իմ ժողովուրդն այսուհետ հերոսանա խաղաղ ու ստեղծագործ աշխատանքում, մշակութային ու հոգևոր կյանքում:

Հիրավի, հայրենիքը ճանաչելով են սիրում:

Մարինե ԽԱՉԱՏՐՅԱՆ Սյրեպ. Հ. Բալասանյանի անվան հ. 5 հիմն. դպրոցի ՄՎԱՊՏՏ

ՇԵՏԱՂՈՍԱԿԱՆ

ԱՆՂԿԻԱՅԻ ՄԵՑ ԲԱՆԱՍՏԵՂՈՒՆ ՈՒ ՐԱՅԵՐԸ

Աստճոն հետ խոսելու միակ լեզուն հայերենն է: Ջորջ Բայրոն

Օտար լեզվի ուսուցումը ավագ դպրոցի հունամիտար հոսքում իր ուղղվածությամբ տարբերվում է ընդհանուր հոսքից և զարգացնում է խորացված լեզվական-հարողակցական մի շարք կարողություններ: Հատկապես կարևորվում է հանրալեզվաբանական իրազեկությունը: Ուսուցումը պետք է հիմնվի խոսքային գործունեության բոլոր տեսակների վրա (ուղեկցող, խոսել, կարդալ, գրել, թարգմանել): Կարևորվում է նաև թարգմանական հմտությունների ձևավորման և զարգացման անհրաժեշտությունը: Գրավոր թարգմանության ժամանակ դպրոցականները ձեռք են բերում երկլեզվյան բառարաններից օգուտներ, թարգմանական հնարներ օգտագործելու հմտություններ, ինչպիսիք են փոխարինումը, տեղափոխությունը, հավելումը և այլն:

Ավագ դպրոցում աշակերտները հաճախ են հանդես գալիս տարբեր զեկուցումներով՝ նվիրված օտարազգի հայագետներին, հայ ժողովրդի բարեկամներին, ինչը հղկում է նրանց բանավոր խոսքը, զարգացնում ճանաչողական ու գնահատողական ունակությունները, բառապաշարը:

Այդպիսի մի թեմա է անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնի՝ հայագիտության մեջ ունեցած ներդրման ուսումնասիրությունը օտար աղբյուրների հիման վրա:

Աշակերտները հանդես են գալիս նրա բանաստեղծությունների արտասանությամբ, կատարած թարգմանություններով, իսկ ուսուցչի դերն այն է, որ լրացուցիչ նյութ հաղորդի՝ մատնանշելով աղբյուրները, աշակերտներին մղելով ինքնուրույն աշխատանքի:

Հայագիտությունը միշտ եղել ու շարունակվում է մնալ միջազգային գիտական հանրության հետաքրքրության և ուշադրության կենտրոնում: Նախ այն պատճառով, որ հայերենը աշխարհի հնագույն լեզուներից է, պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին և առանձին, ինքնուրույն լեզվաճյուղ է: Ապա՝ գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի ու փորձությունների միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին՝ հայերենը մի յուրատեսակ հանրագիտարան է, ուր ներկայացվում է անհիշելի ժամանակների, բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի պատմությունը: Ուսումնասիրելով հայերենը՝ օտարազգի հայագետները ոչ միայն հիացել ու գարնացել են նրա անաղարտությանը ու ճոխությանը, այլև հնարավորություն են ունեցել ծանոթանալու մեր ազգի պատմությանը, մշակույթին: Այսպես, հայերենի ու-

սումնասիրությամբ զբաղվել ու իրենց բարձր գնահատական են տվել Նիկողայոս Մառը, Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Ֆեյդին, ժողգէ Մարկվարտը, Էդմոնդ Շույց, Էմիլ Բենվենիստը, Վիկտոր Գյուգոն և շատ ուրիշներ: Այս առումով պետք է մատնանշել, որ արևմտաեվրոպական խոշոր գրողներից Ջորջ Բայրոնը առավել խորն է ուսումնասիրել ու իր ջերմ վերաբերմունքն է ցուցաբերել դեպի մեր լեզուն, մեր գրականությունն ու պատմությունը:

Համաշխարհային գրականության տիտաններից է 19-րդ դարի անգլիացի մեծագույն բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը: Ծնված լինելով Լոնդոնում՝ բարձր արիստոկրատական ընտանիքում, նա իր կարճատև կյանքի ընթացքում ոչ միայն ստեղծել է ամենար երկեր, այլև պայքարել է անգլիական խավարանների դեմ, ավելին՝ պաշտպան կանգնել օսմանյան բռնատիրության տակ տառապող ժողովուրդներին: Ընթացող բանաստեղծն առանձնապես խորը համակրանք է տածել դեպի այդ բռնակալության կողմից ճնշված ազգերն ու նրանց մշակույթը: Այս առումով Բայրոնն առաջիններից էր, ով ոչ միայն ծանոթացել է հայ ժողովրդի լեզվին ու մշակույթին, այլև խորապես ուսումնասիրել ու իր անսահման սերն ու հարգանքն է ցուցաբերել հազարամյակների պատմություն ունեցող մեր ժողովրդի անցած ուղուն:

Հիասթափված լինելով անգլիական արիստոկրատիայից ու կեղծ հասարակությունից՝ 1816թ. Բայրոնը թողնում է Անգլիան՝ այլևս այնտեղ չվերադառնալու որոշումով: Ընդմիջտ հեռանալով հայրենիքից՝ պրետը հաստատվում է Իտալիայում, որտեղ մասնատվում է ազգային-ազատագրական շարժումներին: Նույն թվականի աշնանը Բայրոնը այցելում է Վենետիկի սուրբ Դավաթ կղզի, ուր ծանոթանում է թուրքական յաթաղանից մագապուծ եղած Մխիթարյան միաբանության գործիչների հետ և կղզին հետագայում անվանում «Հայկական անկախության շտաբ»: Այդ մասին Բայրոնը գրում է. «1816թ. լինելով Վենետիկում, իմ և շատ հավանական է, նաև մյուս ծանփորդների վրա մեծ տպավորություն է թողել Սուրբ Լավաթյանների համայնքը, որը, թվում է, թե միավորում է վանական համալիրի առավելությունները՝ չունենալով նրա արատներից և ոչ մեկը: Մենաստանի կարգուկանոնը, մաքրությունը, հանգստավետությունը, արեղանների ազնվությունը, բարեկրթությունը և երբայրական առաքինություններն ի վիճակի են աշխարհիկ մարդուն ապացուցելու, որ գոյություն ունի մեկ այլ աշխարհ, որը շատ ավելի լավ է, քան մերը... Այս մարդիկ բախաններ են մի հարստահարված և ազնվական ազգի, որը հրեաների ու

հույների նման տարագիր ու ստրուկ է եղել. առանց առաջինների պես խստասիրտ կամ վերջինների պես գերի դառնալու: Այս ժողովուրդը հարստացել է առանց վաշխառության և վաստակել է ամեն պատիվ»: Այնքան խորն են լինում այցելությունից ստացած տպավորությունները, որ Բայրոնը որոշում է կանոնավոր հայոց լեզու և պատմություն ուսումնասիրել: Նրան ուսուցանում է ակադավոր գիտնական, բառարանագիր և թարգմանիչ Հարություն Ավգերյանը: Այդ մասին Բայրոնը իր նամակներից մեկում գրում է. «Սկսել եմ և առաջ եմ տանում իմ հայոց լեզվի ուսումը, որը ես հաղթահարում եմ ուժերիս չափով, հայոց Մենաստա-

հեռ, Բայրոնը, Ավգերյանի հետ համագործակցելով, հրատարակում է «Քերականութիւն Անգլիական և Հայերեն» 1817թ. և «Քերականութիւն Հայերեն և Անգլիական» 1819թ. («A Grammar Armenian and English») դասագրքերը, որտեղ նմուշներ է զետեղել հայ ինն և միջնադարյան գրականությունից, օգնել «Բառարան Անգլերեն և Հայերեն» («A Dictionary English and Armenian» 1821) բառարանի ստեղծմանը, գրել իր նշանավոր «Առաջաբանը», որտեղ արծարծել է հայ ժողովրդի՝ թուրքական ու պարսկական լծից ազատագրվելու խնդիրը: Հայերենից անգլերեն է թարգմանել երկու թուրք՝ Նոր Կտակարանից, երկու գլուխ՝ Մովսես Խո-

տանում, որի համար Հայաստանը վճարել է նույնքան թանկ, որքան Արամի սերունդներին՝ ընդհանրապես: Սակայն հենց դրախտի անհետացման հետ սկսվեց նաև այս երկրի տարաբախտությունը, որովհետև թեպետ երկար ժամանակ նա եղավ մի գորավոր թագավորություն, բայց հազիվ երբեք անկախ մնաց, և դարձրին այն երկիրը, ուր Աստված ստեղծել էր մարդուն իր իսկ պատկերով: Երկրագործի վրա չկա ուրիշ երկիր, որն այնքան լեցուն լիներ հրաշքներով, ինչքան հայերի երկիրը...»:

Անշուշտ, մարգարեական բառեր են ուղղված հայ ժողովրդին: Նման ճշմարիտ ու անաչառ գնահատականով կարող է և պետք է հպարտանա ամեն մի հայ: Հայ ժողովուրդը քիչ բարեբախտություններ է ունեցել կյանքում, և այդ քչերից մեկն այն է, որ շատ ու մեծ բարեկամներ է ունեցել: Այդ մեծերի մեջ առաջիններից մեկը հայ ժողովրդի ճակատագրով տոգորված անձնվեր բարեկամ լորդ Բայրոնն է: Հրաշալի, հուզիչ, իմաստավոր է եղել այդ բարեկամությունը, սակայն, դժբախտաբար, ունի նաև մի դառը, բայց ուսանելի դաս: Հայոց լեզվի նկատմամբ ունեցած իր մեծ հետաքրքրությունն է, որ ստիպեց նրան նստել ու սովորել այն՝ սա ևս մի ուսանելի դաս չի՞ տալիս, արդո՞ք, նրանց, ովքեր քաղքենիորեն արհամարիում են մայրենին, փորձ իսկ չանելով մերձեցալ նրա հարստությանն ու գեղեցկությանը, հայ մշակույթին, որով այնպես հիացած էր Բայրոնը:

Հայ ժողովուրդը Բայրոնի տաժած անշահախնդիր սերը, իրացնում ու համակրանքն իր նկատմամբ հատուցել է նույնքան անշահախնդիր ձևով: Դա ամենից առաջ արտահայտվել է նրա ստեղծագործությունների հանդեպ հայ ընթերցողների՝ երբեք չսարող հետաքրքրությամբ: Հայ շատ դասական և ժամանակակից բանաստեղծներ թարգմանել և ընթերցողին են պարզել ազատության այդ մեծ մարգարեի ու անձնագրի մարտիկի ստեղծագործությունները: Ընդգծենք նաև, որ Բայրոնի ստեղծագործությունն իր հերթին ազդել է հայ գրողների՝ Ղևոնդ Ալիշանի, Սմբատ Շահագիզի, Հովհաննես Թումանյանի, Ռուբեն Որբերյանի և շատերի պոեզիայի վրա:

Բայրոնն իր հեղինակավոր ազդեցությամբ զարկ է տվել հայագիտության զարգացմանը: Այդ տեսակետից նա բացառիկ երևույթ է և նրա՝ այդ ասպարեզում կատարած գործերն արժանի են մեծ երախտագիտության և գնահատության:

**Իրինա ՄԻՐՋՈՅԱՆ**  
**Սյրեվ. Ա. Սախարովի անվան**  
**հ. 8 ավագ դպրոցի անգլերենի**  
**ուսուցչուհի**



նում, ուր ես հաճախում եմ ամեն օր՝ դասեր առնելու մի գիտնական արեղայից և ձեռք են բերել մի շարք եզակի ու օգտակար տեղեկություններ այդ արևելյան ժողովրդի գրականության և բարքերի վերաբերյալ: Նրանք մի հաստատություն ունեն այստեղ՝ մի եկեղեցի և Վանք՝ 90 արեղաներով, որոնցից ոմանք շատ գիտուն և զարգացած մարդիկ են: Նրանք ունեն մի տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար: Հայերեն լեզուն ես գտնում եմ դժվար, բայց ոչ անհաղթահարելի... Դա մի հարուստ լեզու է, որ կարող է մեծապես հատուցել իրեն սովորողի նեղությունը»:

Քերականության կանոններին զուգընթաց, Հ. Ավգերյանը իր անգլիացի աշակերտին հրամցնում էր կտորներ հայ ինն և միջնադարյան գրականությունից: Հայերենից բացի, նրան ավանդում էր հայոց պատմության դասեր, որին Բայրոնը մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ էր ունկնդրում: Տպավորված լինելով իր ուսուցչի գիտելիքներով ու ծանոթանալով հայ գրերին ու մշակույթին՝ Բայրոնը մեծ ոգևորություն էր ստանում՝ ամեն օր այցելելու կղզի: Նա Հ. Ավգերյանին դիմում էր Հայր Պասկալ(Padre Paschal) անվամբ:

Հայերենի ուսուցմանը զուգա-

ԲԱՐԻՆ ԸՆԴ ՁԵՐ

Ուսանողությունը յուրաքանչյուր պետության զարգացման ու առաջընթացի կարևորագույն երաշխիքն է, հասարակական-քաղաքական փոփոխությունների անմիջական մասնակիցն ու հիմնական շարժիչ ուժը:

Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հունամիտար թղեջի առաջին կուրսի ուսանողների համար այդ օրը կիիշվի ընդմիջտ: Երդման արարողություն էր... Առաջին կուրսի ուսանողները մեծ և պարտավորեցնող քայլ էին կատարում: Անցյալի հուշերին թողնելով դպրոցական տարիները՝ նրանք մտնում էին մի նոր ու հետաքրքիր, գիտելիքների ծարավով լեցուն, լուսավոր ու անկրկնելի մի

խորախորհուրդ աշխարհ... Արարողությունը խորիդանշում էր նորանոր բարձունքների հաղթահարման սկիզբը, իսկ բոլորն այդ սկիզբը սկսում են նոր հույս ու հավատով՝ ձգտելով դեպի բարին, դեպի պայծառ ապագան: Նրանք երդվեցին հավատարիմ մնալ ուսանող լինելու վեհ կոչմանը, վառ պահել նահատակված ազատամարտիկների հիշատակը, պատվով շարունակել նրանց կիսատ թողած գործը:

Առաջին կուրսեցիներին շնորհավորանքի խոսքեր ասացին թղեջի տնօրեն Արա Հայրապետյանը և փոխտնօրեն Նաիրա Պողոսյանը: Վերջինս հիշեցրեց, որ հարուստ գիտելիքներ

ձեռք բերելու ճանապարհին պետք է լինել հետևողական՝ գիտության բարձունքներին հասնելու համար և անհազուրդ հետաքրքրասիրությունն ունենալ որպես մշտական ուղեկից: Հաստատության ղեկավարը կարևորեց ուսանողության դերը հասարակական կյանքում և նշեց, որ հենց ուսանողական ցատարանից պետք է նրանք բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունը: Արա Հայրապետյանը հավելեց, որ թղեջում բազմաթիվ քայլեր են ձեռնարկվում՝ ուսումնառության համար առավել հարմարավետ պայմաններ ապահովելու համար, ուստի կոչ արեց բոլոր ուսանողներին՝ առաջնորդվել սովորել սովորելու

սկզբունքով: Վերջում կուրսեցիները ուսանողական տոմսեր և ստուգման գրքույկներ հանձնեցին առաջին կուրսեցիներին:

Բարի երթ ձեզ՝ ձեր ինքնակայացման ճանապարհին: Թող գիտության լուսավոր ջախը լուսավորի ձեր ամեն քայլ:

Բարին ընդ Ձեզ...

**Ռուզաննա ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
**Շուշիի Ա. Խաչատրյանի**  
**անվան պետական հունամիտար**  
**թղեջի կազմակերպիչ**

ԱՅԼԱԶԱՍ

ՄԱՆՈՒԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻՆ՝ ԾԱՓԵՐ, ԳՈՎԱՍԱՆՔ

Մեր ժողովրդի նորոգյա մշակու- քային կյանքում «Նռան հատիկ» մանկապատանեկան թատերական փառատունն արդեն 13-րդ անգամ բազում թատերական խմբերի հյու- րընկալեց Երևանում: Գնախոսների 20-26-ը մայրաքաղաքի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի դահ- լիճում 33 մարզերի, Երևանի և Արցա- խի տարբեր կրթօջախների և կազ- մակերպությունների մանկապատա- նեկան մոտ 30 թատերախմբեր իրենց նոր բեմադրությունները ներ- կայացրին հանդիսատեսին: Այս տա- րի փառատունը կրում էր «Երջանիկ մանկություն» անվանումը, և այն կազմակերպել ու իրականացրին 33 մշակույթի նախարարությունը, Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը, «Նա- խաբեմ» կրթամշակութային ասո- ցիացիան և Երևանի Անանիա Շիրա- կացու անվան ճեմարանը: Փառատու- նում մարզերից ամենաշատ թատե- րախմբեր ներկայացրեց Գեղարքու- նիքը: 4-ը՝ Գավառ և 1-ը՝ Մարտունի քաղաքներից: Արցախը հանդես եկավ 2 թատերախմբով: ԼՂՀ ժո-

ղովրդական արտիստ Քաջիկ Զ- րուբյունյանի ղեկավարությամբ Ստեփանակերտի մանկապատանե- կան ստեղծագործական կենտրոնի սաները ներկայացրին Ս. Ակսակովի «Ավան ծաղիկը» հեքիաթը: Այն ծա- փողջուններով ընդունվեց հատկա- պես պատանի և մանուկ հանդիսա- տեսի, կազմակերպիչների կողմից: Բերձորի արվեստի և սպորտի դպրոցը 2005 թվականից է մաս- նակցում փառատունին, և միշտ էլ մեր մանուկ դերասաններն արժա- նացել են ծափերի ու գովասանքի: Այս անգամ թատերախումբը, որում հիմնականում նոր ընդգրկված և ցածր դասարանների աշակերտներ են, Գասմիկ Կարապետյանի ղեկա- վարությամբ ներկայացրին Աթաբեկ հնկոյանի «Մկների ժողովը» հե- քիաթը: Չնայած առաջին անգամն էին նոր «դերասանները» ելույթ ու- նենում, սակայն պետք է ասել, որ բոլորն էլ լավ հանդես եկան՝ անկաշ- կանը, յուրաքանչյուրն իր դերի մեջ և ամենակարևորը՝ ուրախացրին թե փոքրերին, թե՛ մեծերին: Բեմական հագուստը կարել էր խմբի ղեկավա-

րը: «Նռան հատիկ»-ը մրցանակային չէ, ուստի թատերախմբերը կազմա- կերպիչների կողմից արժանացան պատվոգրի և փառատունը խորի- դանշող հուշանվերի: Կազմկոմիտեի

Երվանդ Մանարյան, 33 մշակույթի նախարարության գլխավոր մասնա- գետ Վարդան Գրիգորյան, «Նախա- բեմ» ասոցիացիայի նախագահ, փա- ռատունը վարող Գարիկ Ղազարյան և Երևանի Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական կազմակերպության «Յրաշք ծաղիկը» հեքիաթը: Փառա- տունը եզրափակեց Վայոց Ձորի մար- գր ա դ ա ր ա ն ի տնօրեն Գասմիկ Կարապետյան: Ընդհանրապես բոլորին՝ Վ. Գրի- գորյանն ասաց. - Ուրախալի է, որ փառատունին մասնակցում են և՛ հին, և՛ նոր թատե- րախմբեր: Սա վկայում է, որ 33- ում թատերական արվեստը նոր փուլ է մտնում: Դերասան Երվանդ Մանարյանը նույնպես շնորհավորեց և ասաց, որ «Նռան հատիկ»-ը կարևոր գործ է կատարում՝ աշխատելով աճող սերնդի հետ: Գարիկ Ղազարյանն իր

հերթին մեջ, որ փառատունն ան- վանվեց «Երջանիկ մանկություն», որպեսզի բոլոր մանուկները լինեն երջանիկ, դրվատեց «Փրկություն» հասարակական կազմակերպությա- նը, որի սաները ներկայացրին «Յրաշք ծաղիկը» հեքիաթը: Փառա- տունը եզրափակեց Վայոց Ձորի մար- գրի Եղեգնաձորի «Կրակե թատրոն» խումբը՝ Աստղիկ Լեշյուկի ղեկավա- րությամբ: Կրակեթատրոնի անհատական ու խմբային ելույթները, պարերը գրավեցին ներկաներին: Զգացվեց, որ մեծ աշխատանք է կատարվել. «Կրակե թատրոն»-ն ասաց իր խոս- քը: Ելույթից հետո գրուցեցի խմբի անդամների և պատասխանատու Ազատուհի Ստեփանյանի հետ: «Կրակե թատրոն»-ն ստեղծվել է երկու տարի առաջ: Այս ընթացքում խումբը հանդես է եկել տարբեր վայ- րերում՝ արժանանալով հանդիսա- տեսի համակրանքին: Փակվեց 13-րդ փառատունը, բայց «Նռան հատիկ»-ը շարունակվելու է:

Ջ ԸՈՔՈՅԱԼ

Ն Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄՐՑՈՒՅՑ ԳԹԿ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետու- քյան կրթության և գիտության նախարա- րությունը հայտարարում է բաց մրցույթ «Գնահատման և թեստավորման կենտ- րոն» պետական ոչ առևտրային կազմա- կերպության գործադիր մարմնի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար: «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակ- ցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետու- քյան այն քաղաքացիները, ովքեր ունեն՝ ա) բարձրագույն կրթություն, բ) կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տար- վա մասնագիտական աշխատանքային ստաժ, գ) տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավա- կան ակտերի իմացություն (այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետու- քյան Սահմանադրություն, աշխատանքա- յին և կրթության ոլորտի Լեռնային Ղարա- բաղի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր): Հավակնորդը պարտավոր է ազատ տիրապետել առնվազն մեկ օտար լեզվի և ունենալ համակարգչային ու այլ տեխ- նիկական միջոցներով աշխատելու հմ- տություն: «Գնահատման և թեստավորման կենտրոնի» տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրա- ժեշտ է ներկայացնել հետևյալ փաս- տաթղթերը՝

- ա) գրավոր դիմում (ԼՂՀ կրթության և գիտության նախարարի անունով), բ) երկու լուսանկար՝ 3x4 չափսի, գ) աշխատանքային գրքույկի պատ- ճենը, դ) ինքնակենսագրություն, ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկը (լրացված), է) տեղեկանք մշտական բնակության վայրից, ը) բնութագիր վերջին աշխատավայ- րից (եթե կազմակերպությունը չի լուծար- վել), թ) զինվորական գրքույկ կամ զինա- պարտության մասին փաստաթուղթ, ե) կենտրոնի զարգացման և բարե- փոխման հայեցակարգ (նախատեսվելիք չորս տարվա պաշտոնավարման համար): Մրցույթին մասնակցելու համար դի- մումները (փաստաթղթերը՝ բնօրինակնե- րով) ներկայացնել 2013 թվականի նոյեմ- բերի 14-ից մինչև դեկտեմբերի 14-ը, ժա- նը՝ 10.00-13.00-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), Լեռնային Ղարաբաղի Հանրա- պետության կրթության և գիտության նա- խարարության ընդհանուր բաժին: (Հաս- ցեն՝ ք. Ստեփանակերտ, Թումանյան 62, հեռախոս՝ 977-119): Մրցույթը տեղի կունենա 2013 թվակա- նի դեկտեմբերի 16-ին, ժամը՝ 11.00-ին, գնահատման և թեստավորման կենտրո- նում: Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Մարտու- նու փողոց 97:

ՄՐՑՈՒՅՑ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ

Ասկերանի շրջան

Բերքաձորի հ/դ - կենսաբանություն՝ 6 ժամ, քիմիա՝ 3 ժամ:

Շուշիի շրջան

Մուրացանի անվան ավագ դպրոց -ֆրանսերեն՝ 5 ժամ, ֆիզիկա՝ 11 ժամ Եղծահողի մ/դ - քիմիա՝ 7 ժամ, կենսաբանություն՝ 8 ժամ, ֆիզիկա՝ 9 ժամ, աշխարհագրություն՝ 6 ժամ, պատմություն՝ 17 ժամ, Մեծ Շենի մ/դ - զինդեկ՝ 0,5 դրույթ, ֆիզկուլտուրա՝ 15 ժամ, Հին Շենի հ/դ - օտար լեզու (անգլերեն)՝ 6 ժամ, Լիսագորի մ/դ - ֆիզիկա՝ 6 ժամ:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվե- լու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 25-26 համարում և տեղադրված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախա- րարության edu.nkr.am կայք էջում: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝ 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1) 2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պա- հանջին համապատասխան որակավորման վերաբերյալ, 3. Անձնագրի պատճենը, 4. Ինքնակենսագրություն (Ձև 4), 5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքա- յին ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հա- վաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում), 6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի, 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք, 8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբե- րի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան դպրոցներում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի: Մրցույթները տեղի կունենան դեկտեմբերի 10-14-ը ընկած ժամանակահատվածում. մանրամասն տե- ղեկությունների համար դիմել համապատասխան դպրոց:

Հարկավոր է իմանալ

Պրոֆեսորը մեկ բաժակ ջուր վերցնելով, սկսում է դասը: Բաժակը բարձրացնում է այնպես, որ բոլորը տեսնեն, և հարցնում է ուսանողներին. - Ի՞նչ եք կարծում, ինչքան՞ և կլշռի այս բաժակը: Լսարանում սկսվում է ակտիվ քննարկում: - Մտավորապես 200 գրամ: Չէ, 300 գրամ: Միգուցե 500 գրամ,- լսարանում հնչում են տարբեր կարծիքներ: - Իրականում ես չգիտեմ պատասխանը: Մինչև չլշռեմ այն, չեմ կարող ասել, բայց հարցը դա չէ, այլ այն, թե ինչ տեղի կունենա, եթե այս բաժակը մի քանի րոպե պահեն իմ ձեռքում: - Ոչինչ: - Իրոք, ոչ մի բան չի լինի: Իսկ ի՞նչ կլինի, եթե այս բաժակը

ՄԵԿ ԲԱԺԱԿ ԶՈՒՐ

պահեն ձեռքում մտավորապես մեկ ժամ: - Ձեր ձեռքը կսկսի ցավել: - Իսկ եթե այսպես պահեն մեկ օր: - Ձեր ձեռքը կբարանա, մկանները կսկսեն ցավել, նույնիսկ կարող եք անդամալույծ դառնալ: - Ըստ ձեզ՝ բաժակի քաշը կփոխվի, եթե ես այն պահեմ մի ամբողջ օր: - Իհարկե՞ ո՛չ,- պատասխանեցին ուսանողները: - Իսկ ի՞նչ պետք է անել, որ այդպիսի իրավիճակում չհայտնվեմք: - Պարզապես բաժակը դրեք սեղանին,- ուրախ պատասխանում է մի ուսանող:

- Այո,- ոգևորված ասում է պրոֆեսորը,- այդպես լինում է նաև ձեր կյանքում խնդիրների հետ: Մտածե՛ք որևէ խնդրի մասին մի քանի րոպե, և այն կհայտնվի ձեր կողքին: Մտածե՛ք նույն խնդրի մասին մի քանի ժամ, և այն կսկսի ձեզ կրծել: Իսկ եթե մտածե՛ք մի ամբողջ օր, այն ձեզ կաթվածի կհասցնի: Կարող եք մտածել խնդրի մասին, բայց ըստ բնական օրենքի՝ դրա «քաշը» չի փոքրանում: Խնդիրը հնարավոր է լուծել միայն գործողությունների միջոցով: Լուծի՛ր այն կամ էլ դի՛ր մի կողմ: Իմաստ չունի հոգում ծանր քարեր քարշ տալ, որոնք քեզ անդամալույծ են դարձնում:

Youandworld.am

ԼՈՒՍԱՐԱՐ Իմ քաղաքի՝ ՍԿԵՏԼԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Մտեփանակերտ, 3. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույ- գությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պար- տավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՄՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մասով: Ստորագրված է տպագրության՝ 14.11.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: